ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
ընդհանուր ժողովի
2025թ. սեպտեմբերի 13-ի
թիվ 1/1-Լ որոշմամբ

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Սիմոն Բաբայան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության
կողմից 27.10.2005թ.
Գրանցման համար՝ 211.174.03619
ՀՎՀՀ՝ 02524634
«28» դեկտեմբերի 2022թ. գրանցված
Կանոնադրության
Թիվ 001-3
փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

«13» _____ 2025թ.

Աշխատակից՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ)

ք. Երևան, 2025թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ նաև՝ Փաստաբանների պալատ կամ Պալատ**) «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է: Փաստաբանների պալատը գործում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Փաստաբանների պալատի գործունեության սկզբունքներն են՝ անկախությունը, օրինականությունը, հրապարակայնությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը և ղեկավարման կոլեգիալությունը:

1.3. Փաստաբանների պալատի անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ
- հայերեն կրճատ՝ ՀՀ փաստաբանների պալատ
- ռուսերեն լրիվ՝ Палата адвокатов Республики Армения
- ռուսերեն կրճատ՝ Палата адвокатов РА
- անգլերեն լրիվ՝ Chamber of Advocates of the Republic of Armenia
- անգլերեն կրճատ՝ Chamber of Advocates of the RA

1.4. Փաստաբանների պալատը ունի խորհրդանիշ: Փաստաբանների պալատն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով):

1.5. Փաստաբանների պալատի գտնվելու վայրի հասցեն է՝

- **Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, Զաքյան փողոց, շենք 7-2: Փոստային դասիչ՝ 0010:**

II. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Փաստաբանների պալատի հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

1) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

2) կազմակերպել փաստաբանների արտոնագրման գործընթացը.

3) կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը.

4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից Օրենքի, սույն

կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.

5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ.

6) Օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը.

7) նպաստել հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը:

2.2. Փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝

1) օժանդակել Հայաստանի Հանրապետության կայացմանն ու զարգացմանը, որպես իրավական և ժողովրդավարական պետություն.

2) նպաստել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը.

3) աջակցել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումներին.

4) աջակցել փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանի դերի ու հեղինակության բարձրացմանը, փաստաբանների մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը.

5) աջակցել Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

6) աջակցել Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի համեմատական վերլուծության և փորձաքննության կատարմանը.

7) նպաստել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցմանը մարդու իրավունքների և ազատությունների ոլորտի միջազգային կոնվենցիաներին.

8) նպաստել Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը.

9) նպաստել սփյուռքում գործող հայ իրավաբանների միությունների հետ կապերի հաստատմանը և համագործակցությանը, նպաստել Հայաստանի Հանրապետության և սփյուռքի հայ փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և իրավաբանների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը.

10) նպաստել արտերկրի իրավաբանների և իրավաբանական կազմակերպությունների հետ կապերի հաստատմանը.

11) նպաստել իրավաբանների միջազգային հավաքների, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպմանը և փաստաբանների փորձի փոխանակման ծրագրերի իրականացմանը.

12) նպաստել իրավագիտության զարգացմանը, իրավական ոլորտի գիտական հետազոտությունների իրականացմանը, աջակցել իրավաբանական գիտական աշխատությունների, ինչպես նաև իրավաբանական գրականության հրատարակմանը և տարածմանը.

13) նպաստել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և այլ կրթական հաստատություններում իրավական գիտելիքների տարածմանը.

14) նպաստել բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ բնակչության շրջանում օրենքների և իրավական գիտելիքների քարոզչության միջոցով.

15) նպաստել փաստաբանների և իրավաբանների ոչ մասնագիտական շփումներին, կազմակերպել իրավաբանների ոչ պաշտոնական ակումբային հանդիպումներ, տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ:

III. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3.1. Փաստաբանների պալատը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը և համապատասխանում է այդ նպատակներին:

3.2. Փաստաբանների պալատը սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեությունը կարող է իրականացնել՝ անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

3.3. Փաստաբանների պալատն անձամբ կարող է իրականացնել միայն ձեռնարկատիրական գործունեության ստորև նշված տեսակները՝

1) կազմակերպել և անցկացնել սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և նմանատիպ այլ միջոցառումներ.

2) իրականացնել օրենքների և այլ իրավական ակտերի փորձագիտական (հետազոտական) ծառայություններ.

3) մշակել օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր.

4) մատուցել խորհրդատվական և գովազդային ծառայություններ.

5) իրականացնել «Փաստաբանական դրամարկղ-ԿԱՌՊԱ» համակարգի սպասարկումը կամ ակրեդիտիվ հաշվարկներ, կամ էսքրոու հաշիվներ.

6) օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակում, բազմացում կամ պաշտոնական վերահրատարակում.

7) իրավաբանական մասնագիտական գրքերի, ամսագրերի, թերթերի և այլ պարբերականների մեծածախ և մանրածախ առևտուր, ինչպես նաև դրանց հրատարակություն.

8) գույքի վարձակալության տրամադրում.

9) ուսանողների պրակտիկայի կազմակերպում

10) մասնագիտական ռիսկերի ապահովագրության շրջանակներում տրամադրել փորձագիտական եզրակացություն:

IV. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Փաստաբանների պալատը ստեղծված է համարվում Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Պետական գրանցման պահից Փաստաբանների պալատը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

4.2. Փաստաբանների պալատն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու պահից ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

4.3. Փաստաբանների պալատի գտնվելու վայրի հասցեի փոփոխությունը նույն բնակավայրի սահմաններում կանոնադրության փոփոխություն չի պահանջում: Այդ փոփոխության մասին պետական գրանցման մարմինը տեղեկացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում:

4.4. Փաստաբանների պալատն իրավունք ունի՝

1) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

2) կազմակերպել և անցկացնել հավաքներ.

3) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

4) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

5) իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ.

6) ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին.

7) օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.5. Փաստաբանների պալատը ազատ է կատարելու այն, ինչն արգելված

չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները:

V. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Փաստաբանների պալատը պարտավոր է՝

1) փաստաբանի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Փաստաբանների պալատի կանոնադրությանը, եթե այն հրապարակված չէ Փաստաբանների պալատի կայքում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) վարել փաստաբանների ցուցակը.

4) հրապարակել իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ոչ պակաս, քան տարին մեկ անգամ.

5) առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.

6) առանց լիազորագրի Փաստաբանների պալատը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) Փաստաբանների պալատի գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 (տասնչորս) օրացուցային օրվա ընթացքում, պետական գրանցման մարմին ուղարկել պաշտոնատար անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները և (կամ) Փաստաբանների պալատի գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները:

5.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել Փաստաբանների պալատի համար նաև այլ պարտականություններ: Փաստաբանների պալատը չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

5.3. Փաստաբանների պալատը չի կարող ստեղծել կամ անդամակցել քաղաքական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև մասնակցել դրանց կառույցների ստեղծմանն ու գործունեությանը:

5.4. Փաստաբանների պալատը պատասխանատվություն չի կրում փաստաբանների պարտականությունների համար, իսկ փաստաբանները պատասխանատվություն չեն կրում Փաստաբանների պալատի պարտավորությունների համար:

5.5. Փաստաբանների պալատն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

VI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1. Փաստաբանների պալատն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

6.2. Փաստաբանների պալատի մարմիններն են՝

1) Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ընդհանուր ժողով).

2) Փաստաբանների պալատի խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ).

3) Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Կարգապահական հանձնաժողով).

4) Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Որակավորման հանձնաժողով):

6.3. Փաստաբանների պալատի մարմիններին վերաբերող դրույթները չեն տարածվում ընդհանուր ժողովի վրա, եթե դա ուղղակիորեն նախատեսված չէ Օրենքով:

6.4. Փաստաբանների պալատի մարմինների անդամներն այդ մարմիններում աշխատում են առանց վարձատրության բացառությամբ.

1) Խորհրդի անդամների խորհրդում իրականացվող շաբաթական ութ ժամը գերազանցող ծանրաբեռնվածության դեպքի. սույն ենթակետում նշված ծանրաբեռնվածությունը գերազանցող աշխատանքի համար փոխհատուցման չափը և կարգը սահմանում է Խորհուրդը.

2) Կարգապահական հանձնաժողովի անդամների շաբաթական ութ ժամը գերազանցող ծանրաբեռնվածության դեպքի. սույն ենթակետում նշված ծանրաբեռնվածությունը գերազանցող աշխատանքի համար փոխհատուցման չափը և կարգը սահմանում է Խորհուրդը.

3) Որակավորման հանձնաժողովի անդամների որակավորման քննությունների բանավոր փուլին մասնակցելու դեպքի. սույն կետում նշված վարձատրության չափը և կարգը սահմանում է Խորհուրդը.

4) Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի.

6.5. Փաստաբանների պալատի խորհրդի և փաստաբանների պալատի այլ մարմինների անդամները, բացառությամբ որակավորման հանձնաժողովի անդամների, ընտրվում են վարկանիշային կարգով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

6.6. Փաստաբանների պալատի մարմինների՝ ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է տվյալ մարմնի անդամների վերջին ընտրության տվյալներով հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված անձը՝ նախորդ անդամի սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար՝ հետևյալ կարգով՝ Փաստաբանների պալատի նախագահը գրավոր առաջարկում է վարկանիշային հաջորդ առավել

«կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանին ներգրավվել, որպես Փաստաբանների պալատի մարմնի անդամ և եթե նա իր գրավոր համաձայնությունը չի ներկայացնում առաջարկը ստանալու օրվանից 5 (հինգ) օրյա ժամկետում, ապա Փաստաբանների պալատի նախագահը նույն կերպ առաջարկում է մյուս առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանին: Սույն կետում նշված ժամկետում առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանի գրավոր համաձայնությունը ստանալու հաջորդ օրվանից նա համարվում է Փաստաբանների պալատի մարմնի անդամ, ինչն արձանագրվում է Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ:

6.7. Փաստաբանների պալատի մարմինների անդամներն իրենց կազմից ձայների մեծամասնությամբ ընտրում են տվյալ մարմնի նախագահին, բացառությամբ Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի: Որակավորման հանձնաժողովի նախագահը ընտրվում է որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամներից:

6.8. Փաստաբանների պալատի մարմնի նիստերը հրավիրում է տվյալ մարմնի նախագահը՝ ըստ անհրաժեշտության: Փաստաբանների պալատի մարմնի նիստերը կարող են հրավիրվել տվյալ մարմնի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ, իսկ խորհրդի նիստերը՝ նաև Փաստաբանների պալատի նախագահի կամ Փաստաբանների պալատի առնվազն երեսուն անդամների նախաձեռնությամբ:

6.9. Փաստաբանների պալատի մարմնի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե դրան մասնակցում է տվյալ մարմնի անդամների առնվազն կեսը: Փաստաբանների պալատի մարմինների նիստերին այդ մարմինների անդամները քվեարկում և իրենց այլ լիազորություններն իրականացնում են անձամբ: Փաստաբանների պալատի մարմինների նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար կամ հարցման կարգով.

1) փաստաբանությանն առնչվող հանրային իրադարձությանը հրատապ արձագանքելու անհրաժեշտության դեպքում.

2) հայտարարված արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում կամ համաճարակի, տարերային աղետների կամ արտակարգ բնույթ կրող այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքերում:

6.10. Փաստաբանների պալատի մարմնի որոշումներն ընդունվում են տվյալ մարմնի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ձայների առավել մեծ քանակ նախատեսված չէ Օրենքով կամ սույն կանոնադրությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը նախագահողի ձայնը որոշիչ է:

6.11. Փաստաբանների պալատի մարմնի որոշումներն ուժի մեջ են մտնում Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում հրապարակվելու պահից, եթե Օրենքով կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Փաստաբանների պալատի մարմինների ընդունած անհատական իրավական ակտերը կարող են չհրապարակվել պաշտոնական կայքէջում, որոնք ուժի մեջ են մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը: Աշխատակազմին կամ ներքին կազմակերպչական հարցերին առնչվող ներքին իրավական ակտերը կարող են չհրապարակվել փաստաբանների պալատի կայքում, եթե ապահովվում է աշխատակազմի կամ հասցեատեր շրջանակի այլ եղանակով իրազեկումը: Անձնական տվյալներ, ինչպես նաև հաշվապահական հաշվառման օրենսդրությամբ գաղտնիք համարվող տեղեկություններ պարունակող ներքին իրավական ակտերը չեն հրապարակվում:

6.12. Փաստաբանների պալատի մարմինների անդամների լիազորությունները դադարում են.

1) նրանց լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում՝ համապատասխան մարմնի հաջորդ կազմի լիազորությունները ստանձնելու պահից.

2) հրաժարական ներկայացնելու դեպքում.

3) Փաստաբանների պալատի անդամի արտոնագրի գործողության դադարեցման կամ կասեցման դեպքում.

4) ներկայացմամբ նշանակվող անդամներին իրենց ներկայացրած մարմնի (անձի) կողմից հետ կանչելու դեպքում, եթե դադարել են նրանց միջև աշխատանքային կամ այլ հարաբերությունները:

6.13. Փաստաբանների պալատի մարմինների անդամների լիազորությունները դադարեցվում են.

1) երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում տվյալ մարմնի նիստերի առնվազն կեսից բացակայելու դեպքում.

2) մեկ տարվա ընթացքում տվյալ մարմնի նիստերից անհարգելի պատճառով առնվազն երեք անգամ անընդմեջ կամ ընդհանուր 7 (յոթ) անգամ բացակայելու դեպքում.

3) Օրենքով կամ Փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված իր պաշտոնեական պարտականությունները պարբերաբար չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, այն է՝

ա. Օրենքով նախատեսված ինքնաբացարկի հիմքերի առկայության պայմաններում ինքնաբացարկ չներկայացնելու դեպքում:

բ. սույն կանոնադրության 16.30-րդ կետի 3-5-րդ ենթակետերից որևէ մեկի պահանջը մեկ տարվա ընթացքում առնվազն երեք անգամ (նույն ենթակետի պահանջը) կոպիտ կերպով խախտելու դեպքում:

6.14. Կանոնադրության 6.13-րդ կետով նախատեսված դեպքերում Փաստաբանների պալատի մարմինների անդամների (բացառությամբ Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի) լիազորությունները դադարեցվում են համապատասխան մարմնի անդամների ընդհանուր թվի

ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ: Փաստաբանների պալատի մարմնի այն անդամը, որի լիազորությունների դադարեցման հարցը քննարկվում է, չի մասնակցում քվեարկությանը, սակայն իրավունք ունի անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել համապատասխան մարմնի տվյալ նիստին, ներկայացնել ապացույցներ և բացատրություններ:

6.15. Փաստաբանների պալատի մարմնի անդամի կամ նախագահի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար համապատասխան մարմնի նախագահի կողմից նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է համապատասխան մարմնի առնվազն երեք անդամի կողմից:

6.16. Փաստաբանների պալատի մարմնի նախագահի լիազորությունները դադարում են նրա՝ որպես Փաստաբանների պալատի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման, ինչպես նաև նրա՝ տվյալ մարմնի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում: Փաստաբանների պալատի մարմնի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է տվյալ մարմնի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ նրա լիազորությունները դադարեցնելու համար: Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են նրա՝ որպես Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները դադարելու դեպքում: Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի լիազորությունները ստանձնում է Փաստաբանների պալատի նոր նախագահը, իսկ այդպիսիք չլինելու դեպքում Փաստաբանների պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը:

6.17. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Փաստաբանների պալատի մարմնի նախագահը տվյալ մարմնի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Փաստաբանների պալատի մարմնի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում համապատասխան մարմնի նախագահին փոխարինում է այդ մարմնի տարիքով ավագ անդամը՝ մինչև տվյալ մարմնի նոր նախագահի ընտրությունը:

6.18. Փաստաբանների պալատի մարմնի՝ ներկայացմամբ նշանակվող անդամի լիազորությունները դադարելու դեպքում այդ անդամին ներկայացրած մարմինը (անձը) 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է նոր ներկայացուցչի: Փաստաբանների պալատի մարմնի՝ ներկայացմամբ նշանակվող անդամի լիազորությունների դադարեցման դեպքում Փաստաբանների պալատի համապատասխան մարմնի որոշումը ուղարկվում է լիազորությունները դադարեցված անդամին ներկայացրած մարմնին (անձին), որը որոշումը ստանալուց հետո 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է նոր ներկայացուցչի:

VII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

7.1. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը Փաստաբանների պալատի բարձրագույն մարմինն է, որի բացառիկ իրավասություններն են՝

1) հաստատում է Փաստաբանների պալատի կանոնադրությունը և փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կամ դրանց լրացումները կամ փոփոխությունները.

2) ընտրում է Փաստաբանների պալատի նախագահին, խորհրդի և կարգապահական հանձնաժողովի անդամներին.

7.2. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը, բացի իրեն բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից, իրավունք ունի լուծել նաև Փաստաբանների պալատի գործունեությանն առնչվող ցանկացած հարց:

7.3. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունի արտոնագիրը չկասեցված յուրաքանչյուր փաստաբան:

7.4. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը որոշումներն ընդունում է՝

1) ընդհանուր ժողովի գումարմամբ (Փաստաբանների պալատի անդամների համատեղ հավաքի ձևով), կամ

2) առանց ընդհանուր ժողովի գումարման (այսուհետ՝ հեռակա կարգով):

7.5. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

7.6. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ գումարվում է սույն կանոնադրությամբ նախատեսված՝ Փաստաբանների պալատի անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով:

7.7. Փաստաբանների պալատի հերթական կամ արտահերթ ընդհանուր ժողովը (գումարմամբ կամ հեռակա կարգով) հրավիրվում է Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ: Փաստաբանների պալատի մարմինների ընտրությունների նպատակով ընդհանուր ժողովը հրավիրվում է համապատասխան մարմնի գործող կազմի լիազորությունների ավարտից առնվազն երեսուն օր առաջ:

7.8. Փաստաբանները Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու օրվա, ժամի (հեռակա քվեարկության դեպքում՝ տևողության), ինչպես նաև տեղի (վայրի) մասին ստանում են ծանուցում՝ փաստաբանների ցուցակում նշված էլեկտրոնային փոստով, ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից՝ ա) 30 (երեսուն) օր առաջ, եթե օրակարգում ընդգրկված են ընտրություններ, կամ բ) 14 (տասնչորս) օր առաջ, այլ հարցերով: Սույն կետում նշված ծանուցումը հրապարակվում է Պալատի կայքէջում, ինչպես նաև տեղադրվում է Պալատի գտնվելու վայրի՝ հայտարարությունների ցուցատախտակի վրա:

7.9. Փաստաբանների պալատի արտահերթ ընդհանուր ժողովը

(գումարմամբ կամ հեռակա կարգով) կարող է գումարվել նաև Փաստաբանների պալատի անդամների ընդհանուր թվի մեկ հինգերորդի կամ Փաստաբանների պալատի նախագահի պահանջով, որը ներկայացվում է Խորհրդին: Փաստաբանների պալատի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու պահանջում նշվում են օրակարգի հարցերը և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը: Փաստաբանների պալատի Խորհուրդը ստանալով սույն կետով նախատեսված արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու պահանջը, պարտավոր է 14 (տասնչորս) օրացույցային օրվա ընթացքում Փաստաբանների պալատի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին որոշում կայացնել՝ պահանջում նշված օրակարգով:

7.10. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի) է, եթե Փաստաբանների պալատի անդամների համատեղ հավաքի ձևով գումարվող ընդհանուր ժողովին ներկա է Փաստաբանների պալատի քվեարկության իրավունք ունեցող անդամների մեկ երրորդից ավելին, կամ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին մասնակցում են Փաստաբանների պալատի քվեարկության իրավունք ունեցող անդամների մեկ երրորդից ավելին:

7.11. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումները ուժի մեջ են մտնում սույն կանոնադրության 7.13-րդ կետով նախատեսված կարգով հրապարակման պահից:

7.12. Քվեարկության արդյունքները հրապարակում է հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ հաշվիչ հանձնաժողովի որոշմամբ այլ անդամը: Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի սույն կետով չնախատեսված որոշումները հրապարակում է Փաստաբանների պալատի նախագահը:

7.13. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումները հրապարակվում են Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում:

7.14. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի արձանագրությունները պահպանվում են Փաստաբանների պալատում՝ անժամկետ:

7.15. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը կարող է դատական կարգով վիճարկել շահագրգիռ փաստաբանը այդ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

7.16. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը չի կարող իր բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել այլ մարմնի:

VIII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

8.1. Փաստաբանների պալատի նախագահի, Փաստաբանների պալատի խորհրդի անդամների և Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների թեկնածուներին (այսուհետ՝ թեկնածուներ) գրանցելու, ինչպես նաև ընդհանուր ժողովի կողմից Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկությունները կազմակերպելու և քվեարկությունների (ընտրությունների) արդյունքներն ամփոփելու նպատակով Փաստաբանների պալատի խորհրդի կողմից կազմավորվում է Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողով (**այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով**)՝ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով՝ երեք տարի ժամկետով նշանակված 15 (տասնհինգ) անդամից:

8.2. Հաշվիչ հանձնաժողովը գործում է երեք տեղամասի (այսուհետ նաև Տեղամաս) միջոցով՝ 1) Կենտրոնական տեղամաս՝ Երևան քաղաքում՝ 9 (ինը) անդամի կազմով, 2) Հյուսիսային տեղամաս՝ Վանաձոր քաղաքում (եթե խորհրդի որոշմամբ այլ քաղաք չի սահմանվի)՝ 3 (երեք) անդամի կազմով և 2) Հարավային տեղամաս՝ Գորիս քաղաքում (եթե խորհրդի որոշմամբ այլ քաղաք չի սահմանվի)՝ 3 (երեք) անդամի կազմով: Հյուսիսային և Հարավային տեղամասերի (այսուհետ՝ միասին Մարզային տեղամասեր իսկ առանձին թվարկման դեպքում՝ Մարզային տեղամաս) անդամներից մեկական անդամ նշանակվում է Մարզային տեղամասի պատասխանատու, որը Մարզային տեղամասում իրականացնում է Հաշվիչ հանձնաժողովի նախագահի լիազորությունները: Հաշվիչ հանձնաժողովը չի հանդիսանում Փաստաբանների պալատի մարմին:

8.3. Հաշվիչ հանձնաժողովի անդամներին նշանակում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ արտոնագիրը չկասեցված փաստաբանների կազմից՝ Փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ: Հաշվիչ հանձնաժողովի անդամների նշանակման (կազմավորման) մասին որոշման մեջ նշվում են Մարզային տեղամասերում նշանակված անդամները և պատասխանատուները:

8.4. Հաշվիչ հանձնաժողովը կազմավորվում է գործող Հաշվիչ հանձնաժողովի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան 20 (քսան) օր առաջ: Հաշվիչ հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում, Փաստաբանների պալատի նախագահը նախաձեռնում է նոր անդամի նշանակման գործընթացը նախորդ անդամի լիազորությունների դադարեցման պահից քսանհինգ օրվա ընթացքում: Նոր անդամի լիազորությունները դադարում են Հաշվիչ հանձնաժողովի գործող կազմի լիազորությունների ժամկետի ավարտին:

8.5. Հաշվիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Փաստաբանների պալատի նախագահը, Փաստաբանների պալատի մարմինների անդամները, սույն կանոնադրությամբ նախատեսված վստահված անձինք, և թեկնածուները:

8.6. Հաշվիչ հանձնաժողովը գործում է օրինականության,

հավասարության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

8.7. Հաշվիչ հանձնաժողովը՝

1) սահմանում է քվեաթերթիկների, արձանագրությունների և ընտրական այլ փաստաթղթերի ձևերը, նմուշները, դրանց լրացման և պահպանման կարգը.

2) սահմանում է թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի օրինակելի ձևերը.

3) հաստատում է դիտորդների հավատարմագրման կարգը և հավատարմագրում է վերջիններիս.

4) կազմակերպում է թեկնածուների կենսագրական տվյալների հրապարակումը.

5) հաստատում է քվեատուփի նմուշը (չափսերը).

6) վերահսկողություն է իրականացնում ընտրության տարածքում սույն կանոնադրության պահանջների կատարման նկատմամբ.

7) կազմակերպում և ամփոփում է քվեարկության արդյունքները.

8) կազմում է քվեարկության արդյունքների արձանագրություն.

9) իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.8. Հաշվիչ հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է Փաստաբանների պալատի նախագահից և Փաստաբանների պալատի մարմիններից:

8.9. Հաշվիչ հանձնաժողովի նիստը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

8.10. Հաշվիչ հանձնաժողովի նիստին Հաշվիչ հանձնաժողովի անդամի մասնակցությունը պարտադիր է:

8.11. Հաշվիչ հանձնաժողովի հերթական նիստը հրավիրում է Հաշվիչ հանձնաժողովի նախագահն՝ իր կողմից հաստատված օրակարգով: Հաշվիչ հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար կարգով: Հեռավար ձևով նիստի անցկացման ընթացակարգը սահմանում է Խորհուրդը:

8.12. Հաշվիչ հանձնաժողովի անդամները Հաշվիչ հանձնաժողովի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին ստանում են ծանուցում՝ էլեկտրոնային փոստով, ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 2 (երկու) օր առաջ, իսկ ընդհանուր ժողովի օրվան նախորդող տասը օրվա, ինչպես նաև ժողովի օրվա ընթացքում՝ հաշվիչի հանձնաժողովի նիստի ժամից 2 (երկու) ժամ առաջ:

8.13. Հաշվիչ հանձնաժողովն արտահերթ նիստ կարող է գումարել Հաշվիչ հանձնաժողովի երկու անդամի պահանջով, որը ներկայացվում է Հաշվիչ հանձնաժողովի նախագահին: Հաշվիչ հանձնաժողովի նիստ հրավիրելու պահանջում նշվում են օրակարգի հարցերը և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ստանալով սույն կետով նախատեսված Հաշվիչ հանձնաժողովի նիստ հրավիրելու

պահանջը, պարտավոր է 4 (չորս) օրացույցային օրվա ընթացքում հրավիրել նիստ՝ պահանջում նշված օրակարգով: Նշված ժամկետում Հաշվիչ հանձնաժողովի նախագահի կողմից Հաշվիչ հանձնաժողովի նիստ չգումարելու դեպքում Հաշվիչ հանձնաժողովի նիստ կարող է գումարվել պահանջ ներկայացրած Հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից՝ նույն օրակարգով:

8.14. Սույն կանոնադրության 8.13-րդ կետով նախատեսված Հաշվիչ հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրելու դեպքում հրավիրողները սույն կանոնադրության 8.13-րդ կետով սահմանված կարգով Հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամներին են ուղարկում Հաշվի հանձնաժողովի նախագահին ուղղված պահանջի պատճենը և մեկ փաստաթղթի տեսքով ծանուցումը՝ ոչ ուշ, քան այդ Հաշվիչ հանձնաժողովի նիստի անցկացման օրվանից 3 (երեք) օր առաջ, որտեղ պարտադիր պետք է նշված լինի Հաշվիչ հանձնաժողովի արտահերթ նիստի օրակարգը, անցկացման տեղը, օրը ու ժամը: Սույն պահանջի հիմքով Հաշվիչ հանձնաժողովի քվորումի բացակայությամբ նիստ չկայանալու դեպքում, պահանջի օրակարգով հարցերն ընդգրկվում են, քննարկվում և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում Հաշվիչ հանձնաժողովի անմիջապես հաջորդող նիստում:

8.15. Հաշվիչ հանձնաժողովն իրավազոր է, եթե՝ հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և Հաշվիչ հանձնաժողովի նիստին ներկա է Հաշվիչ հանձնաժողովի անդամներից կեսից ավելին: Մարզային տեղամասում սույն կանոնադրության 8.7 կետի 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերում նշված Հաշվիչ հանձնաժողովի լիազորություններն (բացառությամբ սույն կանոնադրության 15.25 կետում նշված լիազորության) իրականացնում է Մարզային տեղամասի երեք անդամից բաղկացած կազմը (այսուհետ նաև՝ Մարզային տեղամասի կազմ): Մարզային տեղամասի կազմը իրավազոր է, եթե նիստին մասնակցում է առնվազն երկու անդամ:

8.16. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած Հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Մարզային տեղամասի կազմի որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել առնվազն երկու անդամ:

8.17. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց ընդունման պահից:

8.18. Հաշվիչ հանձնաժողովի՝ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին որոշումները հրապարակվում են Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում և տեղադրվում են Փաստաբանների պալատի գտնվելու վայրում՝ հայտարարությունների ցուցատախտակի վրա:

8.19. Հաշվիչ հանձնաժողովի՝ իր լիազորությունների շրջանակում ընդունված իրավական ակտերն ենթակա են պարտադիր կատարման Փաստաբանների պալատի մարմինների, անդամների, ինչպես նաև սույն կանոնադրությամբ նախատեսված այլ անձանց կողմից:

8.20. Հաշվիչ հանձնաժողովի որոշումների ու արձանագրությունների

պատճենները և քաղվածքները կնքում և ստորագրում են Հաշվիչ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հաշվիչ հանձնաժողովն իրավասու է ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված փաստաթղթերում՝ այդ փաստաթղթերի ընդունման պահից մեկ ամսվա ընթացքում կատարել բովանդակության վրա չազդող տեխնիկական բնույթի շտկումներ, այդ թվում՝ օրենքին հակասող դրույթները հանել տեքստից, եթե նշված իրավական ակտի հիման վրա պետք է կատարվի պետական գրանցում:

8.21. Հաշվիչ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահպանվում են Փաստաբանների պալատում՝ առնվազն հինգ տարի:

8.22. Ընտրությունների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև Հաշվիչ հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է Փաստաբանների պալատի բյուջեի միջոցների հաշվին: Հաշվիչ հանձնաժողովը սահմանում է մարզերի փաստաբանների տեղափոխման, Փաստաբանների պալատի կայքում տեղեկությունների տեղակայման, ինչպես նաև Փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքում և մարզերում գտնվող դահլիճների հետ կապված օժանդակության կարգը՝ համաձայնեցնելով Փաստաբանների պալատի նախագահի հետ: Այդ ծախսերը նախատեսվում են Փաստաբանների պալատի տարեկան բյուջեում:

Հաշվիչ հանձնաժողովի անդամների լիազորությունները և դրանց դադարեցման կարգը.

8.23. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն՝

1) նախապես ծանոթանալու Հաշվիչ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.

2) ելույթներ ունենալու Հաշվիչ հանձնաժողովի նիստերում.

3) ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն.

4) նիստի մասնակիցներին տալու հարցեր և ստանալու պատասխաններ:

8.24. Հաշվիչ հանձնաժողովի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել քվեարկությանը.

2) կատարել Հաշվիչ հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.

3) անցնել Փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված վերապատրաստման դասընթացները.

4) մասնակցել Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին, այդ թվում նաև նիստերին և կատարել իրենց լիազորությունները:

8.25. Հաշվիչ հանձնաժողովի անդամը (այդ թվում՝ նախագահը) իր լիազորությունները կատարելիս ստանում է իր կատարած աշխատանքների դիմաց փոխհատուցում՝ Փաստաբանների պալատի բյուջեից՝ Փաստաբանների

պալատի խորհրդի կողմից սահմանված չափով:

8.26. Հաշվիչ հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե՝

1) նա մեկ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների առնվազն երեք անգամ չի ներկայացել նիստերին.

2) նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը կամ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում.

3) Փաստաբանների պալատի խորհրդին ներկայացրել է Հաշվիչ հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում.

4) նա զորակոչվել է.

5) կասեցվել կամ դադարեցվել է նրա փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը.

6) նա ընդգրկվել է որպես Փաստաբանների պալատի նախագահի, խորհրդի անդամի կամ կարգապահական հանձնաժողովի թեկնածու:

8.27. Սույն կանոնադրության 8.26-րդ կետի 1-րդ, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նախատեսված դեպքերում Հաշվիչ հանձնաժողովի անդամի լիազորությունները համարվում են դադարած Փաստաբանների պալատի խորհրդի որոշման կայացման պահից, իսկ նույն կետի 3-րդ կամ 6-րդ ենթակետում նշված դեպքում համապատասխանաբար ինքնաբացարկի դիմում ներկայացնելու կամ թեկնածու գրանցվելու հաջորդ օրվանից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը

8.28. Հաշվիչ հանձնաժողովի նախագահին և քարտուղարին ընտրում է Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից:

8.29. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է Հաշվիչ հանձնաժողովի անդամներին:

8.30. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը և քարտուղարն ընտրվում են բաց քվեարկությամբ:

8.31. Եթե Հաշվիչ հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնների համար առաջադրվել են մեկական թեկնածուներ, ապա նրանք ընտրված են համարվում, եթե ստացել են քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին: Եթե Հաշվիչ հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնների համար առաջադրվել են մեկականից ավելի թեկնածուներ, ապա ընտրված են համարվում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուները: Ձայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

8.32. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության կազմակերպումն ու անցկացումն, անհրաժեշտության դեպքում օժանդակում է Հաշվիչ հանձնաժողովի անդամներին՝ փոխարինում նրանց բացակայության դեպքում, ինչպես նաև իրականացնում է սույն

կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ: Հաշվիչ հանձնաժողովի նախագահը սահմանում է հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը:

8.33. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ Հաշվիչ հանձնաժողովի քարտուղարը գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում է Հաշվիչ հանձնաժողովի անդամներին՝ փոխարինում նրանց բացակայության դեպքում, ինչպես նաև իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.34. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը կարող են փոխվել Հաշվիչ հանձնաժողովի անդամների երկու երրորդի կողմից ընդունված որոշմամբ, եթե իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են սույն կանոնադրության պահանջների խախտմամբ:

8.35. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի բացակայության դեպքում՝ իրենց լիազորությունները իրականացնում է Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ Հաշվիչ հանձնաժողովի մեկ այլ անդամ:

IX. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Ընդհանուր ժողովի կողմից Փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերի ընդունման և ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները.

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական կազմակերպությունները.

3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կամ այլ ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին.

4) Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիան:

9.2. Սույն գլխում նշված կազմակերպություններին դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

1) Փաստաբանների պալատի խորհուրդը.

2) Փաստաբանների պալատի նախագահը.

3) Հաշվիչ հանձնաժողովի նախագահը:

9.3. Սույն կանոնադրության 9.1-րդ կետում նշված կազմակերպություններն առաջարկում են առավելագույնը երեք ներկայացուցիչ, որոնք հաշվիչ հանձնաժողովի կողմից սահմանված հավատարմագրման կարգի համաձայն ձեռք են բերում դիտորդի կարգավիճակ:

9.4. Սույն կանոնադրության 9.1-րդ կետում նշված

կազմակերպությունները կարող են իրենց նախաձեռնությամբ դիմել հաշվիչ հանձնաժողովին՝ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով, եթե հաշվիչ հանձնաժողովի կողմից սահմանած կարգին համապատասխան դիմել են ոչ քան ընդհանուր ժողովի օրվան նախորդող 10-րդ (տասներորդ) օրը:

9.5. Հաշվիչ հանձնաժողովը մերժում է սույն կանոնադրության 9.3-րդ կետում նշված դիտորդական կազմակերպության առաջարկած դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե սույն կանոնադրությամբ նախատեսված կազմակերպության կանոնադրական խնդիրները կամ նրանց գործունեությունը չեն բավարարում սույն կանոնադրության 9.1-րդ կետի պահանջներին կամ դիտորդների հավատարմագրման կարգում նշված այլ դեպքերում:

9.6. Հաշվիչ հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնում է դիմումը բավարարելուց ոչ ուշ, քան 3 (երեք) օրվա ընթացքում:

9.7. Դիտորդի կողմից որևէ թեկնածուին աջակցելու դեպքում Հաշվիչ հանձնաժողովն իրավունք ունի համապատասխան կազմակերպությանը կամ սուբյեկտին զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից:

9.8. Դիտորդների լիազորությունները դադարում են ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ ութերորդ օրը:

9.9. Դիտորդների հավատարմագրման կարգը, դիտորդների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դիտորդների վկայականների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանում է Հաշվիչ հանձնաժողովը:

9.10. Դիտորդն իրավունք ունի՝

1) ներկա լինելու Հաշվիչ հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում.

2) հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.

3) անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, Հաշվիչ հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, հաշվիչ հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ.

4) ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.

5) օգտվելու սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

9.11. Դիտորդը իրավունք չունի միջամտելու Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին:

9.12. Դիտորդը քվեարկության օրը հետևում է Հաշվիչ հանձնաժողովի

աշխատանքներին և կարող է Հաշվիչ հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

9.13. Դիտորդի՝ սույն կանոնադրությունով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ Հաշվիչ հանձնաժողովը) իրավունք չունի դիտորդին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց:

9.14. Դիտորդը պարտավոր է պահպանել սույն կանոնադրության պահանջները:

X. ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԸ

10.1. Թեկնածուները Հաշվիչ հանձնաժողովի հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք:

10.2. Վստահված անձ կարող է լինել միայն այն փաստաբանը, որի արտոնագիրը կասեցված չէ:

10.3. Թեկնածուներին գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում Հաշվիչ հանձնաժողովը թեկնածուին տալիս է ոչ ավել, քան երեք վստահված անձանց վկայականներ՝ նշելով թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը: Թեկնածուն վկայականները տրամադրում է վստահված անձանց:

10.4. Վստահված անձն իրավունք ունի՝

1) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու Հաշվիչ հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա լինելու քվեարկության սենյակում.

2) անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, Հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայությամբ անարգել ծանոթանալու Հաշվիչ հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, Հաշվիչ հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները կամ անել դրանցից քաղվածքներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Հաշվիչ հանձնաժողովների որոշումները, գործողությունները կամ անգործությունը.

4) հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.

5) չմիջամտելով Հաշվիչ հանձնաժողովի անդամի աշխատանքներին՝ ֆիզիկապես ներկա լինելու հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեաթերթիկ հատկացնող անդամների, քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին.

6) քվեարկության օրը հետևելու Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին և դրանց վերաբերյալ Հաշվիչ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու

դիտարկումներ և առաջարկություններ.

7) քվեարկության արդյունքներն ամփոփելիս Հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայությամբ անարգել ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա լինելու քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը.

8) իրականացնել սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

10.5. Վստահված անձի՝ սույն կանոնադրությունով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ Հաշվիչ հանձնաժողովը) իրավունք չունի վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց:

10.6. Վստահված անձը պարտավոր է պահպանել սույն կանոնադրության պահանջները: Հաշվիչ հանձնաժողովի նիստին, ինչպես նաև քվեարկության ժամանակ քվեարկության սրահում և քվեաթերթիկների հաշվարկման ժամանակ կարող է ներկա գտնվել միայն թեկնածուի մեկ վստահված անձ:

XI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

11.1. Հեռակա կարգով Փաստաբանների պալատի կանոնադրության կամ վարքագծի կանոնագրքի (դրանց փոփոխությունների և լրացումների) ընդունման հարցով քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ քվեաթերթիկների միջոցով:

11.2. Փաստաբանների պալատի նախագահի, Փաստաբանների պալատի խորհրդի անդամների և Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրություններն անցկացվում են փակ գաղտնի քվեարկությամբ՝ քվեաթերթիկների միջոցով:

11.3. Փաստաբանների պալատի նախագահը, Փաստաբանների պալատի խորհրդի և Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամները ընտրվում են անմիջականորեն:

11.4. Ընտրող փաստաբանի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

11.5. Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: Թեկնածուները կամ այլ անձինք քարոզչություն կարող են իրականացնել միայն սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:

11.6. Սույն կանոնադրությամբ նախատեսված կարգի խախտմամբ անցկացված քարոզչությունը, ընտրությունների անցկացումը և արդյունքների ամփոփումը հանգեցնում են Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների վերաբերյալ որոշման անվավերության, եթե դրանք

ազդել կամ կարող էին ազդել վերջնական արդյունքների վրա:

XII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Որպես թեկնածու առաջադրելու իրավունք ունի յուրաքանչյուր փաստաբան: Յուրաքանչյուր փաստաբան կարող է առաջադրել ընդամենը մեկ թեկնածու: Թեկնածուն կարող է առաջադրվել նաև ինքնաառաջադրման միջոցով: Թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է ընդհանուր ժողովի գումարման օրվանից 27 (քսանյոթ) օր առաջ և ավարտվում է ընդհանուր ժողովի գումարման օրվանից 22 (քսաներկու) օր առաջ: Թեկնածուներն առաջադրվում են միայն Կենտրոնական տեղամասի միջոցով:

12.2. Որպես Փաստաբանների պալատի նախագահ կարող է առաջադրվել առնվազն տաս տարվա փաստաբանական ստաժ ունեցող Փաստաբանների պալատի անդամը:

12.3. Փաստաբանների պալատի անդամը կարող է ընտրվել Փաստաբանների պալատի մեկ մարմնում:

12.4. Ինքնաառաջադրման դեպքում փաստաբանը ներկայացնում է Հաշվիչ հանձնաժողովին դիմում ինքնաառաջադրման մասին, իսկ այլ փաստաբանի կամ փաստաբանների կողմից թեկնածու առաջադրելու դեպքում ներկայացվում է դիմում թեկնածու առաջադրելու մասին:

12.5. Ինքնաառաջադրման կամ թեկնածու առաջադրելու մասին դիմումը ներառում են՝

1) թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը.
2) թեկնածուի բնակության վայրը.
3) թեկնածուի աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը).
4) թեկնածուի արտոնագրի համարը.
5) ինքնաառաջադրման դեպքում՝ թեկնածուի, իսկ մյուս դեպքում՝ առաջադրողի (առաջադրողների) ստորագրությունը (ստորագրությունները):

12.6. Դիմումում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է այդ փաստաթուղթը ներկայացնողնի ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով: Հաշվիչ հանձնաժողովն իրավունք չունի չընդունելու ներկայացված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

12.7. Թեկնածու առաջադրելու մասին դիմումին պետք է կցվի նաև թեկնածուի գրավոր համաձայնությունը:

12.8. Փաստաբանների պալատի նախագահի թեկնածուն համարվում է գրանցված համապատասխան դիմումը ներկայացնելու օրը, բացառությամբ երբ՝

- այլ փաստաբանի (փաստաբանների) կողմից ներկայացված դիմումին կցված չէ թեկնածուի գրավոր համաձայնությունը, կամ

- թեկնածուի մասնագիտական ստաժը տաս տարուց պակաս է:

12.9. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ համապատասխան անդամը, նույն օրը Փաստաբանների պալատի նախագահի թեկնածուին կամ նրան առաջադրողին տրամադրում է թեկնածուի գրանցման մասին գրավոր հավաստագիր, բացառությամբ, երբ առկա են սույն կանոնադրության 12.8-րդ կետում նշված մերժման հիմքերը: Մերժման դեպքում, նույն օրը, Հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ անդամը տրամադրում է մերժման մասին գրավոր փաստաթուղթ՝ համապատասխան հիմնավորումներով:

12.10. Փաստաբանների պալատի խորհրդի անդամի կամ Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամի թեկնածուն համարվում է գրանցված, բացառությամբ, երբ այլ փաստաբանի (փաստաբանների) կողմից ներկայացված դիմումին կցված չէ թեկնածուի գրավոր համաձայնությունը:

12.11. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ համապատասխան անդամը, նույն օրը Փաստաբանների պալատի խորհրդի անդամի կամ Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամի թեկնածուին կամ նրան առաջադրողին տրամադրում է թեկնածուի գրանցման մասին գրավոր հավաստագիր, բացառությամբ, երբ առկա է սույն կանոնադրության 12.10-րդ կետում նշված մերժման հիմքը: Մերժման դեպքում, նույն օրը, Հաշվիչ հանձնաժողովի նախագահը կամ անդամը տրամադրում է մերժման մասին գրավոր փաստաթուղթ՝ համապատասխան հիմնավորումներով:

12.12. Թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝ Հաշվիչ հանձնաժողովի որոշմամբ, եթե՝

- նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին, կամ
- պարզվել է, որ համաձայնություն չի տվել իր թեկնածության համար, կամ
- նա Փաստաբանների պալատի նախագահ է, սակայն գրանցվել է, որպես խորհրդի անդամի կամ Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամի թեկնածու, կամ հակառակը, և Հաշվիչ հանձնաժողովի նախագահի նախազգուշացումը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում, չի հրաժարվել այդ կարգավիճակից, կամ
- որպես թեկնածու է գրանցվել Փաստաբանների պալատի նախագահի, խորհրդի անդամի կամ Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամ ընտրվելու համար կամ դրանցից երկուսի համար և Հաշվիչ հանձնաժողովի նախագահի նախազգուշացումը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում, չի ընտրել դրանցից մեկը (այս դեպքում, Հաշվիչ հանձնաժողովը թեկնածուին գրանցումից հանում է բոլոր տեղերից):

XIII. ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

13.1. Թեկնածուներն իրավունք ունենք սույն կանոնադրությամբ չարգելված ձևերով և միջոցներով իրականացնել քարոզչություն:

13.2. Քարոզչությունը սկսվում է թեկնածուների գրանցման ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից և ավարտվում է քվեարկության (ընդհանուր ժողովի) մեկնարկի ժամից 40 (քառասուն) ժամ առաջ: Քվեարկության սենյակում արգելվում է քարոզչական նյութեր տեղադրել:

13.3. Քվեարկության օրը քարոզչությունն արգելվում է:

13.4. Քարոզչությանը չեն կարող մասնակից դարձվել՝

1) Հաշվիչ հանձնաժողովի անդամները.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև դրանց աշխատակիցները.

3) ՀՀ սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, դատախազության մարմինների աշխատակիցները (ծառայողները), զինծառայողները.

4) բարեգործական և կրոնական կազմակերպությունները.

5) օտարերկրյա քաղաքացիները և օտարերկրյա կազմակերպությունները:

13.5. Քարոզչությունը կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, հրապարակային քարոզչական միջոցառումների ձևով (ժողովներ, հանդիպումներ, հրապարակային քննարկումներ, բանավեճեր, հավաքներ), տպագիր նյութեր հրապարակելու, տպագրված, ձայնագրված կամ նկարահանված նյութեր տարածելու միջոցով:

13.6. Փաստաբանների պալատն ապահովում է անհատույց Փաստաբանների պալատի պաշտոնական կայքի օգտագործումը թեկնածուների համար՝ հավասար պայմաններով:

13.7. Արգելվում է՝

1) քվեարկության ժամանակ օգտագործել Փաստաբանների պալատում զբաղեցրած պաշտոնը.

2) քարոզչության ժամանակ բարեգործական միջոցառումների անցկացումը փաստաբանների համար.

3) քարոզչության փուլում փաստաբաններին ցանկացած եղանակով անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) Փաստաբանների պալատում պաշտոն, դրամ, սննդամթերք, արժեթղթեր, գույք կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ.

4) քվեարկության և դրան նախորդող օրը քվեարկության տարածքում և դրան հարող տարածքներում փաստաբանների վրա ազդեցություն գործել բանավոր կամ գրավոր ձևով, բաժանել ցուցակներ, ինչպես նաև այլ եղանակներով ընդհանուր ժողովի քննարկմանը դրված հարցի վերաբերյալ քարոզչություն կատարելը.

5) մինչև քվեարկությունն ավարտվելը հրապարակել քվեարկության արդյունքը.

13.8. Թեկնածուները պարտավոր են պահպանել նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը: Քարոզչության կարգի

պահպանման վրա հսկողությունը իրականացնում է Հաշվիչ հանձնաժողովը:

13.9. Թեկնածուների կողմից քարոզչության կարգի խախտման դեպքում յուրաքանչյուր փաստաբան կարող է դիմել Հաշվիչ հանձնաժողովին՝ դրանք կանխելու կամ նախազգուշացում կիրառելու խախտում թույլ տված թեկնածուի նկատմամբ:

13.10. Թեկնածուի կողմից քարոզչության կարգի կոպիտ խախտման դեպքում Հաշվիչ հանձնաժողովը կարող է հանձնաժողովի ներկա անդամների 2/3 (երկու երրորդ) ձայներով որոշում կայացնել թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին: Հաշվիչ հանձնաժողովի՝ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է բողոքարկվել Փաստաբանների պալատի խորհուրդ: Խորհուրդը սույն կետում նշված բողոքը քննում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընդհանուր ժողովի քվեարկությունը սկսելու ժամը:

13.11. Թեկնածուի կարգավիճակ չունեցող փաստաբանի կողմից քարոզչության կարգի կոպիտ խախտման դեպքում Հաշվիչ հանձնաժողովը դիմում է Փաստաբանների պալատի նախագահին՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

XIV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

14.1. Քվեարկությունն անցկացվում է Փաստաբանների պալատի խորհրդի կողմից որոշված տարածքում (Մարզային տեղամասերի տարածքներում):

14.2. Քվեարկության սկսելու և ավարտելու ժամերը սահմանվում է Փաստաբանների պալատի խորհրդի կողմից:

14.3. Քվեարկությունն անցկացվում է այդ նպատակով կահավորված սենյակում:

14.4. Քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորին չափ ընդարձակ և բավարարի հետևյալ պահանջները.

1) հնարավորություն ընձեռվի քվեարկության ողջ ընթացքում ապահովելու Հաշվիչ հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքը.

2) հնարավորություն ընձեռվի վստահված անձանց և դիտորդներին իրենց տեսադաշտում պահելու քվեատուփը, քվեարկության խցիկները (պայմանով, որ չի խախտվում քվեարկության գաղտնիությունը), քվեարկության խցիկներից մինչև քվեատուփն ընկած հատվածը:

3) Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն.

4) Քվեարկության խցիկը պատրաստվում է այնպես, որ ընտրողը կարողանա ընտրական սենյակում գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը, ունենա բավարար լուսավորվածություն, տեղադրված լինի գրիչ:

14.5. Միաժամանակ տարբեր քվեարկություններ անցկացվելու դեպքում քվեաթերթիկները պատրաստվում են այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:

14.6. Քվեաթերթիկները պատրաստվում են անթափանց թղթից:

14.7. Քվեաթերթիկի վրա նշվում է թեկնածուների ազգանունը, անունը և հայրանունը՝ ազգանվան այբբենական հերթականությամբ:

14.8. Գաղտնի քվեարկության մասնակիցը՝ Փաստաբանների պալատի անդամը (այսուհետ նաև՝ ընտրող), մոտենում է համապատասխան սեղանին ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթը կամ փաստաբանի վկայականը: Հաշվիչ հանձնաժողովի անդամը ստուգում է ընտրողի տվյալները, որից հետո ընտրողը ստորագրում է իր անվան դիմաց և նրան տրամադրվում է/են քվեաթերթիկ (քվեաթերթիկներ): Այն դեպքում, երբ փաստաբանի անունը անհիմն կերպով բացակայում է ցուցակից, ապա փաստաբանը կարող է մասնակցել քվեարկությանը Փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

14.9. Քվեաթերթիկը (քվեաթերթիկները) ստանալուց հետո ընտրողը մոտենում է քվեախցիկին, կատարում իր ընտրությունը և քվեաթերթիկը քառապատիկ ծալված վիճակում գցում է քվեատուփի մեջ: Տարբեր հարցերով քվեարկությունների դեպքում, ընտրողը քվեախցիկում քվեաթերթիկներն առանձնացնում է ըստ խմբերի և դրանք քառապատիկ ծալված վիճակով գցում է այդ խմբի համար առանձնացված քվեատուփի մեջ: Ընտրությունը կատարելուց անմիջապես հետո ընտրողը հեռանում է քվեարկության կատարման վայրից:

14.10. Քվեարկության ժամանակ չի թույլատրվում Հաշվիչ հանձնաժողովի սահմանած գույնի գրիչներից բացի այլ գույնի գրիչներ օգտագործել: Փաստաբանների պալատի աշխատակազմը քվեախցերում ապահովում է պատշաճ քանակի գրիչներով: Չի թույլատրվում նաև Հաշվիչ հանձնաժողովի սահմանած ձևով նշանից տարբերվող նշանով քվեարկություն կատարելը: Սույն կետում նշված պահանջը չպահպանելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

14.11. Քվեախցիկների և քվեատուփերի գտնվելու սրահում ընտրողներին չի թույլատրվում հրապարակել, թե ում օգտին են քվեարկել կամ հորդորել ընտրել կամ չընտրել որևէ թեկնածուի: Չի թույլատրվում նաև քվեաթերթիկներն իր հետ ընտրության վայրից դուրս տանել:

14.12. Եթե առաջադրված է Փաստաբանների պալատի նախագահի մեկ թեկնածու, ապա քվեարկության մասնակիցը Փաստաբանների պալատի նախագահի թեկնածուին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառերին համապատասխանող քառանկյան մեջ, իսկ դեմ քվեարկելիս՝ «դեմ եմ» բառերին համապատասխանող քառանկյան մեջ: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

14.13. Եթե առաջադրված են Փաստաբանների պալատի նախագահի երկու կամ ավելի թեկնածուներ, ապա քվեարկության մասնակիցը իր

նախընտրած Փաստաբանների պալատի նախագահի թեկնածուին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառերին համապատասխանող քառանկյան մեջ: Փաստաբանների պալատի նախագահի ընտրության ժամանակ ընտրողը նշում է կատարում միայն մեկ թեկնածուի օգտին: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

14.14. Վարկանիշային կարգով գաղտնի քվեարկության ժամանակ ընտրողը նշում է կատարում իր նախընտրած թեկնածուների օգտին, որը չպետք է գերազանցի՝

ա) Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրության ժամանակ՝ 6 (վեց) թեկնածուների թվաքանակը,

բ) կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրության ժամանակ՝ 4 (չորս) թեկնածուների թվաքանակը:

Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

14.15. Եթե քվեարկության է դրված Փաստաբանների պալատի կանոնադրության կամ վարքագծի կանոնագրքի ընդունման կամ այլ հարց, ապա քվեարկության մասնակիցը այդ հարցի օգտին կողմ քվեարկելիս նշում է կատարում «կողմ եմ» բառերին համապատասխանող քառանկյան մեջ, իսկ դեմ քվեարկելիս՝ «դեմ եմ» բառերին համապատասխանող քառանկյան մեջ: Սույն կետում նշված պահանջը խախտելու դեպքում քվեաթերթիկը կհամարվի անվավեր:

14.16. Քվեաթերթիկների տպագրումն ապահովում է Հաշվիչ հանձնաժողովը:

14.17. Հաշվիչ հանձնաժողովի անդամները և քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք ունեցող անձինք քվեարկության օրը՝ վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են ներկա լինելու իրավունքը հավաստող անվանաքարտ:

14.18. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը, ընտրողների ցուցակները այբբենական կարգով և քվեաթերթիկները բաշխում է ընտրողներին գրանցող և քվեաթերթիկներ հատկացնող Հաշվիչ հանձնաժողովի անդամներին:

14.19. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը և ժամին՝ հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

14.20. Քվեարկության սենյակում հաշվիչ հանձնաժողովի անդամներից և քվեարկողներից բացի, կարող են ներկա լինել թեկնածուների մեկական վստահված անձինք, դիտորդները: Թեկնածուն քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող է գտնվել միայն քվեարկությանը մասնակցելու համար:

14.21. Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել Հաշվիչ հանձնաժողովի նախագահի կողմից որոշված քանակից ավելի քվեարկող: Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար Հաշվիչ հանձնաժողովի նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնելու հերթով՝ մեկ-մեկ:

14.22. Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը:

14.23. Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ: Լիազորված անձանց միջոցով քվեարկությունն արգելվում է:

14.24. Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի Հաշվիչ հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի Հաշվիչ հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է:

14.25. Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել Հաշվիչ հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

XV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

15.1. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը նախօրոք նշված ժամին հայտարարում է քվեարկության ավարտի մասին և արգելում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Հաշվիչ հանձնաժողովը քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս, որից հետո Հաշվիչ հանձնաժողովի նախագահը փակում է քվեատուփի ճեղքը:

15.2. Գաղտնի քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի անդամներն ամփոփում են քվեարկության արդյունքները:

15.3. Գաղտնի քվեարկության արդյունքների ամփոփումն իրականացվում է դրա համար առանձնացված սենյակում, որի ընթացքում սենյակում կարող են ներկա գտնվել միայն Հաշվիչ հանձնաժողովի անդամները, դիտորդները և վստահված անձինք (յուրաքանչյուր թեկնածուի համար մեկ վստահված անձ): Ներկա գտնվող անձինք իրավասու են ձայնագրել և/կամ տեսանկարահանել

նշված գործընթացը: Բացի Հաշվիչ հանձնաժողովի անդամներից, մյուս ներկաները իրավունք չունեն քվեատուփերին կամ քվեաթերթիկներին ձեռք տալ:

15.4. Քվեարկության ավարտից հետո Հաշվիչ հանձնաժողովի անդամները հաշվում և Հաշվիչ հանձնաժողովի նախագահին են վերադարձնում չօգտագործված քվեաթերթիկները:

15.5. Հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփմանը զուգահեռ, նախքան քվեատուփ բացելը, կազմում է արձանագրություն (թիվ 1), որում նշվում է՝

1) չօգտագործված քվեաթերթիկների թիվը, անօգտագործելի դարձնելով չօգտագործված քվեաթերթիկները՝ անկյունը կտրելու միջոցով.

2) ժողովին մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թիվը (ցուցակային թիվ).

3) ըստ ցուցակի ստորագրությունների քվեաթերթիկ ստացածների թիվը:

15.6. Նշված թիվ 1 արձանագրությունը կազմելուց հետո Հաշվիչ հանձնաժողովի նախագահը բացում է համապատասխան քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեարկության արդյունքը և փոխանցում է հաշվիչ հանձնաժողովի անդամներին տեսակավորելու համար:

15.7. Քվեաթերթիկները տեսակավորելուց հետո դրանք հաշվարկվում են, իսկ արդյունքները՝ արձանագրվում: Յուրաքանչյուր թեկնածուի անուն, ազգանունի դիմաց գրառվում են նրա օգտին տրված ձայները, իսկ այլ հարցով քվեարկության դեպքում՝ այդ հարցի օգտին տրված ձայները: Քվեաթերթիկների հաշվարկումը և արդյունքների ամփոփումը կարող են իրականացվել համակարգչային տեխնիկայի և համակարգչային ծրագրային ապահովման միջոցով:

15.8. Անվավեր ճանաչված և սահմանված նմուշին չհամապատասխանող քվեաթերթիկների քանակը արձանագրվում է առանձին տողերով:

15.9. Արձանագրության (թիվ 2) մեջ գրառվում է

1) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

2) անվավեր քվեաթերթիկների թիվը,

3) սահմանված նմուշին չհամապատասխանող քվեաթերթիկների թիվը,

4) թեկնածուների անուն, ազգանունները և յուրաքանչյուրի ստացած ձայները, իսկ այլ հարցով քվեարկության դեպքում՝ այդ հարցի օգտին տրված ձայները:

15.10. Թիվ 2 արձանագրությունը կազմվում է Փաստաբանների պալատի նախագահի, Փաստաբանների պալատի խորհրդի անդամների, Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրության, ինչպես նաև այլ հարցով քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ: Յուրաքանչյուր դեպքում, արձանագրության մեջ «թիվ 2» գրառումից հետո նշվում է համապատասխանաբար «Ն» (Փաստաբանների պալատի նախագահ), «Խ» (Փաստաբանների պալատի խորհուրդ), «Կ» (Կարգապահական հանձնաժողով) և «Լ» (այլ հարցով (կանոնադրություն, վարքագծի կանոնագիրք):

15.11. Տեսակավորված քվեաթերթիկները փաթեթավորվում են առանձին-առանձին:

15.12. Սահմանված նմուշի քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե

1) Փաստաբանների պալատի նախագահի ընտրության ժամանակ մեկից ավելի թեկնածուների օգտին նշումներ է պարունակում, իսկ վարկանիշային կարգով քվեարկության ժամանակ անդամների քանակից ավելի թեկնածուների օգտին նշումներ է պարունակում,

2) չի պարունակում որևէ նշում,

3) պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում,

4) կատարված է սահմանվածից էականորեն տարբերվող նշում.

5) սույն կանոնադրությունում նշված այլ դեպքերում:

15.13. Կասկած հարուցող քվեաթերթիկների անվավերության կամ սահմանված նմուշի չհամապատասխանելու հարցը քվեարկությամբ որոշում է Հաշվիչ հանձնաժողովը:

15.14. Վարկանիշային կարգով Փաստաբանների պալատի խորհրդի և Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների վերջին հորիզոնականը զբաղեցրած այն թեկնածուների ձայների հավասարության դեպքում, երբ հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած թեկնածուին, ապա վերջին հորիզոնականը զբաղեցրած հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն: :

15.15. Հանձնաժողովի անդամները ստորագրում են կազմված արձանագրությունները, որոնցից մեկական օրինակ անմիջապես ներկայացնում են Փաստաբանների պալատի նախագահին:

15.16. Եթե հանձնաժողովի անդամը հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց, ապա արձանագրությունում նշվում է այդ մասին:

15.17. Եթե Հաշվիչ հանձնաժողովի որևէ անդամ արձանագրության տվյալների վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նա ներկայացնում է իր գրավոր կարծիքը, որը կցվում է արձանագրությանը, իսկ իր ստորագրության կողքին այդ մասին կատարում է նշում:

15.18. Քվեարկության ավարտից հետո՝ մինչև քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, Հաշվիչ հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել:

15.19. Արձանագրությունը կազմվում է 4 (չորս) օրինակից. մեկ օրինակը փակցվում է Փաստաբանների պալատում՝ տեսանելի տեղում, մեկ օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում, երկու օրինակը հանձնվում է Փաստաբանների պալատի արխիվ:

15.20. Պարկերի վրա պետք է առկա լինի Հաշվիչ հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հաշվիչ հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրել պարկերի վրա կամ սեփական դրոշմով դրոշմելու պարկերը: Մարզային տեղամասերից քվեարկության պարկերը դրոշմվելու պահից 24 ժամվա ընթացքում հանձնման-

ընդունման ակտով փոխանցվում են Հաշվիչ հանձնաժողովի նախագահին կամ Պալատի աշխատակազմի ղեկավարին:

15.21. Բոլոր պարկերը Հաշվիչ հանձնաժողովի նիստի ժամանակ պետք է փակվեն: Պարկերը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է Հաշվիչ հանձնաժողովի նախագահը:

15.22. Հաշվիչ հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և Հաշվիչ հանձնաժողովի կնիքով:

15.23. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը պարկերը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը և Հաշվիչ հանձնաժողովի կնիքը քվեարկության ավարտից հետո՝ պահպանության են հանձնվում Փաստաբանների պալատի արխիվ:

15.24. Քվեարկության երկրորդ փուլ նշանակվելու դեպքում քվեարկությունն անցկացվում է Պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Թեկնածուների ընտրությունների և Փաստաբանների պալատի ներքին իրավաբանական ակտի ընդունման ամփոփումը

15.25. Հաշվիչ հանձնաժողովը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է ընտրությունների արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

1) Փաստաբանների պալատի նախագահ ընտրվելու մասին.

2) Փաստաբանների պալատի նախագահի ընտրության երկրորդ փուլ անցկացնելու մասին.

3) Փաստաբանների պալատի նախագահի ընտրությունը չկայացած համարելու և Փաստաբանների պալատի նախագահ չընտրվելու մասին.

4) Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրվելու մասին.

5) Կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրվելու մասին.

6) Փաստաբանների պալատի ներքին իրավական ակտի կամ այլ հարցով որոշման ընդունման մասին.

7) Փաստաբանների պալատի ներքին իրավական ակտի կամ այլ հարցով քվեարկությունը չկայացած ճանաչելու մասին:

15.26. Ընտրության արդյունքները կարող են դատարանի վճռով ճանաչվել անվավեր, եթե անճշտությունների չափը կամ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի ունեցած էական խախտումներն ազդել են կամ կարող էին ազդել քվեարկության արդյունքների վրա:

15.27. Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում այդ մասին դատական ակտի ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան տասը և ոչ ուշ, քան 30

(երեսուն) օր հետո սույն կանոնադրությունով սահմանված կարգով անցկացվում է նոր քվեարկություն:

15.28. Ընտրությունները կայացած են համարվում, եթե դրանց մասնակցել են բոլոր փաստաբանների՝ ընտրողների մեկ երրորդը:

15.29. Փաստաբանների պալատի կանոնադրության կամ վարքագծի կանոնագրքի նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

15.30. Փաստաբանների պալատի նախագահ ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկ ստացածների) ձայների կեսից ավելին:

15.31. Եթե քվեարկվել է Փաստաբանների պալատի նախագահի երկու կամ ավելի թեկնածու, և նրանցից որևէ մեկը չի ստացել անհրաժեշտ ձայներ, ապա անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Հավասար ձայների դեպքում երկրորդ փուլին երկրորդ թեկնածուի մասնակցությունը որոշվում է վիճակահանությամբ:

15.32. Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավել ձայներ ստացած թեկնածուն, իսկ ձայների հավասար լինելու դեպքում անցկացվում է վիճակահանություն:

15.33. Այն դեպքում, երբ քվեարկվել է մեկ թեկնածու, նա համարվում է ընտրված, եթե ստացել է քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկ ստացածների) ձայների կեսից ավելին:

15.34. Եթե Փաստաբանների պալատի նախագահ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, անցկացվում է նոր ընտրություն:

15.35. Փաստաբանների պալատի խորհրդի անդամ են ընտրվում առավել շատ ձայներ հավաքած առաջին տասներկու թեկնածուները:

15.36. Կարգապահական հանձնաժողովի անդամ են ընտրվում առավել շատ ձայներ հավաքած առաջին ինը թեկնածուները:

Վիճակահանություն անցկացնելու կարգը

15.37. Սույն կանոնադրությունում նշված դեպքում վիճակահանությունը կատարվում է Հաշվիչ հանձնաժողովի կողմից, որին կարող են ներկա գտնվել տվյալ մարմնի համար նախատեսված անդամության քանակի վերջին տեղի համար հավասար ձայներ ստացած թեկնածուները (կամ նրանց վստահված անձինք) և դիտորդները:

15.38. Հավասար ձայներ ստացած թեկնածուների թվին համապատասխան պատրաստվում են վիճակահանության միատեսակ թերթիկներ: Հանձնաժողովի քարտուղարի կողմից մեկ թերթիկի (բացառությամբ այն դեպքի, երբ պետք է ընտրված համարվեն մի քանի անձինք) վրա լրացվում է «ընտրված է», իսկ մյուս (մնացած) թերթիկի (թերթիկների) վրա «ընտրված չէ»

բառերը: Թերթիկները ծալվում են քառապատիկ, այնպես, որ նշումը չերևա և գցվում վիճակահանության արկղի մեջ:

15.39. Թեկնածուները կամ նրանց վստահված անձինք թեկնածուների ազգանունների այբբենական հաջորդականությամբ արկղից վերցնում են ծալված թերթիկը, բարձրաձայն կարդում թերթիկի վրա գրված բառը և փոխանցում Հաշվիչ հանձնաժողովի նախագահին:

15.40. Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը վիճակահանության արդյունքում հանել է «ընտրված է» նշումով թերթիկը:

15.41. Վիճակահանության արդյունքների մասին կազմվում է արձանագրություն:

Մարզային տեղամասերում քվեարկության կազմակերպման և արդյունքների ամփոփման առանձնահատկությունները

15.42. Փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է այն մազրերի ցանկը, որոնք ընդգրկվում են Հյուսիսային և Հարավային մարզային տեղամասերում: Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ ընդհանուր ժողովը կարող է կազմակերպվել և անցկացվել մեկ՝ Կենտրոնական տեղամասի միջոցով, որի դեպքում Մարզային տեղամասերը չեն մասնակցում Հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկությանն առնչվող որոշումների կայացմանը:

15.43. Փաստաբանների պալատի աշխատակազմը ըստ խորհրդի որոշմամբ սահմանված Մարզային տեղամասերում ընդգրված մարզերի, հրապարակում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող փաստաբանների ընդհանուր և Մարզային տեղամասերի ցուցակներ (այսուհետ՝ Տեղամասային ցուցակներ): Տեղամասային ցուցակում ընդգրկվում են այն փաստաբանները, որոնք գործունեություն են իրականացնում տվյալ տարածքում (մարզում): Պալատի աշխատակազմը փաստաբանների ցուցակները կազմելիս հիմք է ընդունում Պալատի կայքում նշված փաստաբանի գործունեության հասցեն:

15.44. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող փաստաբանների նախնական ցուցակը տեղամասային բաշխվածությամբ Պալատի կողմից հրապարակվում է քվեարկությունից ոչ ուշ, քան **երկու շաբաթ** առաջ: Եթե փաստաբանը նախընտրում է քվեարկությանը մասնակցել այլ վայրում, քան նշված է նախնական ցուցակում, ապա քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 (յոթ) օր առաջ այդ մասին դիմում է ներկայացնում Պալատ՝ նշելով իր նախընտրած վայրը, որին համապատասխան Պալատը ցուցակներում կատարում է շտկումներ:

15.45. Այն դեպքում, երբ փաստաբանը քվեարկության է ներկայանում ոչ այն տարածքում, որի ցուցակում ընդգրկված է, Հաշվիչ հանձնաժողովի նախագահը (մարզային տեղամասի պատասխանատուն) բացառելով

փաստաբանի կողմից կրկնաքվեարկության հնարավորությունը՝ թույլատրում է նրան մասնակցել քվեարկությանը՝ քվեարկող փաստաբանի համապատասխան դիմումի և մյուս տեղամասերում վերջինիս մասնակցության բացակայության վերաբերյալ տեղեկանքների հիման վրա: Սույն կետում նշված դեպքում կազմվում է լրացուցիչ ցուցակ, իսկ մյուս տեղամասի գրանցամատյանում տվյալ փաստաբանի սյունակում նշվում է այն տեղամասը, որտեղ նա քվեարկել է:

15.46. Քվեարկողների ցուցակները և քվեաթերթիկները Տեղամասերին են հանձնվում Հաշվիչ հանձնաժողովի կողմից քվեարկությունից առնվազն 24 ժամ առաջ: Մարզային տեղամասերի պատասխանատուներն ապահովում են քվեարկողների ցուցակների և քվեաթերթիկների պահպանվածությունը:

15.47. Քվեարկության արդյունքների ամփոփումն իրականացվում է սույն կանոնադրության 15.1-15.41 կետերով սահմանված կարգով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

1) սույն կանոնադրության 15.5. կետում նշված՝ Հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմվող թիվ 1 արձանագրությունը պարունակում է նաև Մարզային տեղամասերին տրամադրված քվեաթերթիկների թիվը.

2) սույն կանոնադրության 15.9. կետում նշված՝ Հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմվող թիվ 2 արձանագրությունը պարունակում է նաև Մարզային տեղամասերից ստացված թիվ 2 արձանագրությունների տվյալները: Մարզային տեղամասերից քվեարկության ցուցակները, սույն կանոնադրության 15.5. և 15.9. կետերում նշված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները կազմելուց և ստորագրելուց անմիջապես հետո սկանավորվում և էլեկտրոնային եղանակով ուղարկվում են Հաշվիչ հանձնաժողովին: Մարզային տեղամասերում առկա ընտրական փաստաթղթերը տեղադրվում են ընտրական փաստաթղթերի պարկում և Մարզային տեղամասի կնիքի ու արձանագրությունների հետ միասին ոչ ուշ քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամում հանձնվում են Հաշվիչ հանձնաժողովի նախագահին.

3) քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելիս Հաշվիչ հանձնաժողովը հիմք է ընդունում Մարզային տեղամասերից էլեկտրոնային եղանակով ստացված արձանագրությունները.

4) սույն կանոնադրության 15.22. կետում նշված քաղվածքը Մարզային տեղամասից տրվում է պատասխանատուի և անդամներից մեկի ստորագրությամբ և Մարզային տեղամասի կնիքով:

XVI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

16.1. Փաստաբանների պալատի խորհուրդը Փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմինն է:

16.2. Փաստաբանների պալատի խորհուրդը ունի տասներկու անդամ՝ չհաշված խորհրդի նախագահը: Փաստաբանների պալատի նախագահն ի

պաշտոնե Փաստաբանների պալատի խորհրդի նախագահն է:

16.3. Փաստաբանների պալատի խորհրդի անդամները (բացառությամբ խորհրդի նախագահի) վարկանիշային կարգով ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից չորս տարի պաշտոնավարման ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնադրության 16.4-րդ կետով սահմանված դեպքերի:

16.4. Փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է Փաստաբանների պալատի խորհրդի անդամների վերջին ընտրության տվյալներով վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանը՝ նախորդ անդամի սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար՝ հետևյալ կարգով՝ Փաստաբանների պալատի նախագահը գրավոր առաջարկում է վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանին ներգրավվել, որպես խորհրդի անդամ և եթե նա իր գրավոր համաձայնությունը չի ներկայացնում առաջարկը ստանալու օրվանից հինգ օրյա ժամկետում, ապա Փաստաբանների պալատի նախագահը նույն կերպ առաջարկում է մյուս առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանին: Սույն կետում նշված ժամկետում առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանի գրավոր համաձայնությունը ստանալու հաջորդ օրվանից նա համարվում է Փաստաբանների պալատի խորհրդի անդամ, ինչն արձանագրվում է Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ:

16.5. Փաստաբանների պալատի խորհուրդը.

1) մշակում և Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում նոր խմբագրությամբ կանոնադրությունը, դրա փոփոխությունները կամ լրացումները.

2) մշակում և Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում նոր խմբագրությամբ փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, դրա փոփոխությունները կամ լրացումները.

3) Փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ հաստատում է Փաստաբանների պալատի տարեկան բյուջեն՝ ըստ հոդվածների.

4) հաստատում և հրապարակում է Փաստաբանների պալատի և դրա մարմինների, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության վերաբերյալ ռազմավարական և տարեկան հաշվետվությունները, ներառյալ՝ Փաստաբանների պալատի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև խորհրդի կողմից ընտրված՝ Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված անկախ աուդիտորական եզրակացությունը.

5) կազմավորում է հաշվիչ հանձնաժողովը և դադարեցնում է դրա անդամների լիազորությունները.

6) սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ (այդ թվում՝ որակավորման քննություններին մասնակցելու) վճարների անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը,

7) սահմանում է փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը.

8) որոշում է ընդունում փաստաբանի հավակնորդներին (այսուհետ՝ հավակնորդ) փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու վերաբերյալ՝ Օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված կարգով.

9) որոշում է ընդունում փաստաբանի արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին.

10) որոշում է ընդունում փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու կամ վերականգնելու մասին.

11) փաստաբանների հարցմամբ տալիս է խորհրդատվական բնույթի պարզաբանումներ փաստաբանի վարքագծի կանոնագրքով, ինչպես նաև պարզաբանումներ Փաստաբանների պալատի կանոնադրությամբ և Փաստաբանների պալատի ներքին ակտերով նախատեսված դրույթների կիրառության վերաբերյալ.

12) հաստատում է խորհրդի, Փաստաբանների պալատի այլ մարմինների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Փաստաբանների պալատի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը.

13) ընտրում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի Փաստաբանների պալատը ներկայացնող անդամներին և հաստատում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կազմը.

14) նշանակում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին և դադարեցնում նրա լիազորությունները.

15) հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը)՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

16) ներկայացնում է առաջարկություններ իրավասու պետական մարմիններին օրենքների և իրավական այլ ակտերի փոփոխությունների, լրացումների, դրանց ընդունման վերաբերյալ, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք է տալիս նախագիծ մշակող մարմիններին.

17) հաստատում է Փաստաբանների պալատի ռազմավարական պլանը (ծրագրերը).

18) հաստատում է.

ա. Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը.

բ. Հանրային պաշտպանի գրասենյակի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները.

գ. հանրային պաշտպանության զարգացման ծրագրերը.

դ. հանրային պաշտպանի գրասենյակի տարեկան հիմնական կատարողական ցուցանիշները.

ե. կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ հաշվետվությունների համապատասխանությունը ստուգելու կարգը.

զ) ստեղծում է հանրային պաշտպանի գրասենյակի պահուստային ֆոնդ.

19) Փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ստուգում է հանրային պաշտպանի գրասենյակի հաշվետվությունների արժանահավատությունը.

20) ստուգում և գնահատում է հանրային պաշտպանների գործունեությունը՝ խորհրդի սահմանած կարգով և չափանիշներին համապատասխան.

21) նախաձեռնում է Փաստաբանների պալատում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումներ և իրականացնում դրանց վերահսկումը.

22) հաստատում է Փաստաբանների պալատի աշխատակազմի հաստիքացուցակը (հաստիքացուցակում ներառվում է նաև Փաստաբանների պալատի նախագահի աշխատավարձը՝ որոշված սույն կանոնադրությամբ նշված աշխատավարձի (հիմնական և լրացուցիչ) համաձայն).

23) քննում է Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումների դեմ բերված բողոքները.

24) անհրաժեշտության դեպքում պահանջում է Փաստաբանների պալատի նախագահից ներկայացնելու առանձին հարցերի վերաբերյալ արտահերթ հաշվետվություններ.

25) սահմանում է Փաստաբանների պալատի խորհրդի կողմից Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական վերահսկողության կարգը.

26) ընտրում է Փաստաբանների պալատի աուդիտ իրականացնող անձին (աուդիտորի),

27) ստեղծում է տնտեսական ընկերություններ կամ մասնակցում է դրանցում, ինչպես նաև ստեղծում է առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ ու ընդունում է դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումներ.

28) ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է կառուցվածքային ստորաբաժանումներ և ընդունում է դրանց կանոնակարգերի հաստատման մասին որոշում.

29) մշակում և հաստատում է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգը, եթե այն սահմանված չէ կանոնադրությամբ.

30) հաստատում է Փաստաբանների պալատի աշխատանքային ներքին կարգապահական կանոնակարգը.

31) սահմանում է փաստաբանի օգնականի մուտքի, տարեկան վճարը և այլ վճարները, ինչպես նաև դրանք վճարելու կարգը.

32) հաստատում է փաստաբանների վերապատրաստման կարգը.

33) հաստատում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրությունը.

34) հաստատում է փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերի ուղենիշները.

35) վերահսկում է իր կողմից ընդունած որոշումների, կարգերի և այլ ներքին իրավական ակտերի կատարումը.

36) փաստաբանին կամ այլ անձին շնորհում է «Փաստաբանների պալատի պատվավոր անդամի» կոչում.

37) սահմանում է Փաստաբանների պալատի մարմինների կողմից ընդունված ներքին իրավական ակտերի հրապարակման կարգը.

38) հաստատում է Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի անվանման, խորհրդանշանի կամ դրոշի օգտագործման կարգը.

39) հաստատում է Փաստաբանների պալատի խորհրդի գործունեության կարգը (աշխատակարգը).

40) սահմանում է Փաստաբանների պալատի փաստաթղթերի պահպանման նվազագույն ժամկետները.

41) Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու նպատակով սահմանում է.

42) կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն ժամաքանակը և այլ չափանիշները, ներառյալ՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից կազմակերպվող կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագրերի չափանիշները.

43) յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամաքանակով և այլ չափանիշներին համապատասխանող կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր իրականացրած) փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակի կազմման և վարման կարգը: Սույն կետով սահմանված ցուցակում ներառվում են Օրենքի 44.2-րդ հոդվածի 2-րդ մասի միայն 1-3-րդ կետերով սահմանված տվյալները.

44) Կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը, պայմանները և ձևը.

45) կարող է նախատեսել Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամաքանակով և այլ չափանիշներին համապատասխանող կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր կազմակերպած) փաստաբաններին և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպություններին խրախուսելու այլ միջոցներ.

46) հայտարարում է մրցույթ ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի երկու իրավաբան գիտնական անդամի թեկնածուներին ներգրավելու համար և սահմանում է Փաստաբանների պալատի խորհրդին ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման և ուսումնասիրման կարգն ու պայմանները.

47) ընտրում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի երկու իրավաբան գիտնական անդամներին.

48) ընտրում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի երեք փաստաբանի.

49) իրականացնում է օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

16.6. Փաստաբանների պալատի խորհրդի նիստերին Փաստաբանների պալատի խորհրդի անդամը քվեարկում և իր այլ լիազորություններն իրականացնում է անձամբ:

16.7. Փաստաբանների պալատի խորհուրդն որոշումներն ընդունում է՝ Փաստաբանների պալատի խորհրդի գումարմամբ՝ Փաստաբանների պալատի խորհրդի անդամների համատեղ հավաքի ձևով:

16.8. Փաստաբանների պալատի խորհրդի նիստերը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

16.9. Փաստաբանների պալատի հերթական խորհրդի նիստերը հրավիրվում են Փաստաբանների պալատի նախագահի կողմից՝ հաստատված օրակարգով, ըստ անհրաժեշտության, բայց տարեկան չորս անգամից ոչ պակաս:

16.10. Փաստաբանների պալատի արտահերթ խորհրդի նիստերը կարող են հրավիրել Փաստաբանների պալատի խորհրդի անդամների մեկ երրորդի կամ Փաստաբանների պալատի երեսուն անդամների նախաձեռնությամբ՝ հաստատված օրակարգով, սույն կանոնադրության 16.13-րդ և 16.14-րդ կետերով նախատեսված կարգով:

16.11. Փաստաբանների պալատի Խորհրդի հերթական և արտահերթ նիստերը կարող են անցկացվել առցանց (դիստանցիոն) ձևով, եթե Խորհրդի անդամները չեն կարող անձամբ ներկա գտնվել նիստին և այդ մասին Խորհրդի նիստերի քարտուղարին տեղեկացրել են նիստից առնվազն 6 (վեց) ժամ առաջ:

16.12. Փաստաբանների պալատի խորհրդի անդամները Փաստաբանների պալատի խորհրդի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին ստանում են առձեռն կամ փոստով (պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով) գրավոր ծանուցում՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 2 օր առաջ:

16.13. Փաստաբանների պալատի արտահերթ խորհրդի նիստ հրավիրելու պահանջը ներկայացվում է Փաստաբանների պալատի նախագահին: Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստ գումարելու պահանջում նշվում են օրակարգի հարցերը և դրանց քննարկման անհրաժեշտության

հիմնավորումը: Փաստաբանների պալատի նախագահը ստանալով սույն կետով նախատեսված Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստ գումարելու պահանջը, պարտավոր է 7 (յոթ) օրացույցային օրվա ընթացքում հրավիրել Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստ՝ պահանջում նշված օրակարգով: Նշված ժամկետում Փաստաբանների պալատի նախագահի կողմից Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստ չգումարելու դեպքում Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել պահանջ ներկայացրած Փաստաբանների պալատի խորհրդի անդամների և փաստաբանների կողմից՝ նույն օրակարգով:

16.14. Սույն կանոնադրության 16.10-րդ կետով նախատեսված Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու դեպքում հրավիրողները սույն կանոնադրության 16.12-րդ կետով սահմանված կարգով Փաստաբանների պալատի խորհրդի բոլոր անդամներին են ուղարկում Փաստաբանների պալատի նախագահին ուղղված պահանջի պատճենը և մեկ փաստաթղթի տեսքով ծանուցումը՝ ոչ ուշ, քան այդ նիստի անցկացման օրվանից 3 օր առաջ, որտեղ պարտադիր պետք է նշված լինի Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստի օրակարգը, անցկացման տեղը, օրը ու ժամը: Սույն կետով նախատեսված պահանջի հիմքով Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստում քվորումի բացակայությամբ նիստ չկայանալու դեպքում, պահանջի օրակարգով հարցերն ընդգրկվում են, քննարկվում և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում Փաստաբանների պալատի խորհրդի արտահերթ նիստին անմիջապես հաջորդող նիստում:

16.15. Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավասու է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում է խորհրդի առնվազն 7 (յոթ) անդամ, այդ թվում՝ խորհրդի նախագահը (նախագահի պաշտոնակատարը), բացառությամբ կարգապահական գործով վերանայման խորհրդի նիստի: Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննությանը, ինչպես նաև կարգապահական գործով խորհրդի վերանայման նիստն իրավասու է, եթե նիստին մասնակցում է խորհրդի առնվազն 6 (վեց) անդամ, այդ թվում՝ խորհրդի նիստը նախագահողը: Այն դեպքում, երբ կարգապահական գործով խորհրդի վերանայման նիստը երկու կամ ավել անգամ չի կայանում խորհրդի նիստը նախագահողի բացակայության պատճառով, ապա խորհուրդը կարող է առանց նախագահողի մասնակցության նիստ գումարել և նշանակել նոր նախագահող: Փաստաբանների պալատի խորհուրդն իրավունք չունի շեղվել օրակարգից: Փաստաբանների պալատի խորհուրդը կարող է հետաձգել օրակարգում ընդգրկված կոնկրետ հարցի քննարկումը՝ հարցի քննարկման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ Փաստաբանների պալատի խորհրդի անդամների կողմից կատարված դիտողությունները պարզաբանելու նպատակով:

16.16. Փաստաբանների պալատի խորհրդի նախագահն իրավունք ունի

հարցերի քննարկմանը ներգրավել Փաստաբանների պալատի աշխատակազմի անդամներին կամ այլ մասնագետներին: Փաստաբանների պալատի խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը և Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի ռեկտորը:

16.17. Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Սույն կանոնադրության 16.5-րդ կետի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 25-րդ և 32-րդ ենթակետերում սահմանված հարցերով որոշումները խորհուրդն ընդունում է եթե այդ հարցերով կողմ են քվեարկել խորհրդի առնվազն 7 (յոթ) անդամ:

16.18. Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ Փաստաբանների պալատի խորհրդի նախագահը (նիստը նախագահողը) կրկնում է քվեարկության դրվող հարցը ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում է կողմ տրված ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում է դեմ ու ձեռնպահ ձայների թիվը, եթե խորհրդի նիստերի անցկացման կարգով այլ ընթացակարգ նախատեսված չէ:

16.19. Եթե Փաստաբանների պալատի խորհրդի նիստում քննարկվում է Փաստաբանների պալատի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Փաստաբանների պալատի խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

16.20. Քվեարկության արդյունքներն արտացոլվում են Փաստաբանների պալատի խորհրդի նիստի արձանագրության մեջ: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 10-օրյա ժամկետում: Փաստաբանների պալատի խորհրդի նիստերն արձանագրվում են պարզ, թղթային եղանակով: Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի արձանագրումը կազմակերպվում է Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի կողմից:

16.21. Արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

2) նիստին մասնակցած անձանց (այդ թվում՝ խորհրդի անդամների քանակը) անունները՝ նշելով իրենց պաշտոնները.

3) նիստի օրակարգը.

4) քվեարկության դրված հարցերը և այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները.

5) նիստում ընդունված որոշումը (եզրափակիչ մասը):

16.22. Փաստաբանների պալատի խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում է Փաստաբանների պալատի խորհրդի նախագահը և խորհրդի քարտուղարը, որոնք էլ պատասխանատվություն են կրում արձանագրությունում

առկա տեղեկությունների հավաստիության համար: Փաստաբանների պալատի խորհրդի քարտուղարին նշանակում է Պալատի խորհրդի նախագահը՝ Փաստաբանների պալատի աշխատակազմից:

16.23. Պալատի խորհուրդը թղթային արձանագրություն կազմելու փոխարեն կարող է օգտագործել ձայնագրության կամ տեսագրության համակարգ: Տեխնիկական համակարգի միջոցով կատարված ձայնագրությունը (տեսագրությունը) պահպանվում (ձայնագրվում) է լազերային սկավառակի կամ այլ նյութական կրիչի վրա: Ձայնագրության (տեսագրության) հիման վրա խորհրդի քարտուղարի կողմից կազմվում է տեղեկանք, որտեղ նշվում են խորհրդի ներկա անդամների անունները, ազգանունները, օրակարգի հարցերը, ընդունված որոշումների եզրափակիչ մասերը և քվեարկության արդյունքները (բացառությամբ գաղտնի քվեարկության հարցերով): Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված որոշումները կազմվում են առանձին ակտի (որոշման) ձևով, բացառությամբ խորհրդի նիստի ժամանակ կայացված ընթացակարգային որոշումների: Փաստաբանների պալատի խորհրդի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշումը ստորագրում է խորհրդի նախագահը:

16.24. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումների պահպանման, գրանցման և հրապարակման կարգը սահմանվում է Փաստաբանների պալատի խորհրդի կողմից:

16.25. Փաստաբանների պալատի խորհուրդը չի կարող իր իրավասության հարցերի վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը փոխանցել այլ մարմնի, բացառությամբ Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի:

16.26. Փաստաբանների պալատի խորհուրդը, որպես կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմին՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու մասին կարգապահական հանձնաժողովի որոշման հիմնավորվածության և օրինականության հարցը:

16.27. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները վերանայելու նպատակով Փաստաբանների պալատի խորհրդի նիստի գումարման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են Օրենքի 39.11-րդ հոդվածով:

16.28. Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Խորհրդի նախագահի կողմից նշանակված խորհրդի անդամներից մեկը (Խորհրդի նախագահի փոխարինողը):

16.29. Փաստաբանների պալատի խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) Փաստաբանների պալատի աշխատանքները բարելավելու նպատակով նրա մարմիններին ներկայացնել առաջարկություններ.

2) ծանոթանալու Փաստաբանների պալատի բոլոր փաստաթղթերին.

3) սպառիչ տեղեկատվություն ստանալ Փաստաբանների պալատի գործունեության մասին.

4) ազատ դուրս գալ Փաստաբանների պալատի խորհրդի անդամությունից:

16.30. Փաստաբանների պալատի խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել խորհրդի նիստերին.

2) խորհրդի նիստին մասնակցության անհնարինության դեպքում խորհրդի գործունեության կարգի համաձայն տեղեկացնել Փաստաբանների պալատին. կարգապահական գործով վերանայման նիստը նախագահող նշանակվելու դեպքում բարեխղճորեն և ժամանակին՝ Փաստաբանների պալատի գտնվելու վայրում ստանալ կարգապահական վարույթը, կատարել կազմակերպչական անհրաժեշտ բոլոր գործողությունները, կազմել որոշման նախագիծը, խորհրդի գործունեության կարգին համապատասխան խորհրդի մյուս անդամներին իրազեկելուց հետո ստորագրել այն և հանձնել Փաստաբանների պալատին՝ գտնվելու վայրում.

3) պահպանել Փաստաբանների պալատի այն փաստաթղթերի կամ տեղեկությունների գաղտնիությունը, որոնք հրապարակային չեն, այդ թվում՝ կարգապահական գործով գաղտնիք պարունակող տեղեկությունները, Փաստաբանների պալատի անդամների կամ աշխատակիցների անձնական տվյալները, ինչպես նաև կարգապահական վերանայման գործով որոշման կայացման, քվեարկության, որոշման կազմման ժամանակ քննարկումների հետ կապված տեղեկությունները.

4) հարգանքով վերաբերվել խորհրդի մյուս անդամներին, Փաստաբանների պալատի աշխատակիցներին և խորհրդի նիստին ներկա այլ անձանց.

5) ձեռնպահ մնալ Փաստաբանների պալատը (այդ թվում՝ մարմինները) վարկաբեկող գործողություններից կամ արտահայտություններից, ինչը չի սահմանափակում խորհրդի անդամի քննադատության իրավունքը:

16.31. Փաստաբանների պալատի խորհրդի անդամը չի կարող իր կարգավիճակն օգտագործել.

1) քաղաքական բնույթի հայտարարություններ կատարելու համար և իր լիազորություններն իրականացնելիս պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն և չեզոքություն.

2) փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում առավելություն ստանալու համար:

16.32. Փաստաբանների պալատի խորհրդի նախագահը.

1) համակարգում է խորհրդի գործունեությունը և կազմակերպում նրա բնականոն աշխատանքը.

2) հաստատում է Փաստաբանների պալատի խորհրդի նիստի օրակարգը.

3) ստորագրում է խորհրդի որոշումները բացառությամբ կարգապահական գործերով Խորհրդի վերանայման որոշումների.

4) ստորագրում է փաստաբանների արտոնագրերը.

5) իրականացնում է Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

XVII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ

17.1. Փաստաբանների պալատի նախագահը Փաստաբանների պալատի գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձն է:

17.2. Փաստաբանների պալատի նախագահի իրավասության ներքո են փաստաբանների պալատի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով կամ սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի կամ Փաստաբանների պալատի այլ մարմինների իրավասությանը վերապահված հարցերի:

17.3. Փաստաբանների պալատի նախագահին Փաստաբանների պալատի անդամների կազմից ընտրում է ընդհանուր ժողովը՝ փակ գաղտնի քվեարկությամբ, չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

17.4. Փաստաբանների պալատի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ:

17.5. Փաստաբանների պալատի նախագահը՝

1) ներկայացնում է Փաստաբանների պալատը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների հետ հարաբերություններում.

2) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Փաստաբանների պալատի անունից և ներկայացնում նրա շահերը.

3) իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

4) սահմանված կարգով Փաստաբանների պալատի անունից կնքում է գործարքներ.

5) բանկում բացում է Փաստաբանների պալատի հաշվարկային և ոչ հաշվարկային հաշիվներ.

6) Օրենքով և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Փաստաբանների պալատի գույքը.

7) ընդունում է որոշումներ Փաստաբանների պալատի բնականոն գործունեությունն ապահովելուն առնչվող հարցերի վերաբերյալ.

8) նշանակում և ազատում է Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

9) սահմանում է Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների շրջանակը.

10) ապահովում է Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը.

11) փաստաբանի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ.

12) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, ընդունում է որոշումներ, տալիս է կատարման համար պարտադիր

ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ինչպես նաև ընդունում է այլ անհատական կամ ներքին իրավական ակտեր.

13) մշակում և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանների պալատի բնականոն գործունեությունը ապահովող ներքին իրավական ակտերը.

14) Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանների պալատի աշխատակազմի հաստիքացուցակը.

15) ընդգրկում է փաստաբանին փաստաբանների ցուցակում.

16) դադարեցնում է մահացած փաստաբանի արտոնագրի գործողությունը և հանում է փաստաբանների ցուցակից.

17) տրամադրում է փաստաբանի վկայականներ ու պլաստիկ քարտեր, ինչպես նաև փաստաբանի օգնականի վկայականներ.

18) վերահսկողություն է իրականացնում հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ.

19) կազմակերպում և համակարգում է իրավասու պետական մարմիններին օրենքների և իրավական այլ ակտերի փոփոխությունների, լրացումների, դրանց ընդունման վերաբերյալ, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դրանք մշակող մարմիններին կարծիքների ներկայացումը.

20) կազմում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում անվճար իրավաբանական օգնության տրամադրման փոխհատուցման ֆինանսական հայտերը.

21) մշակում է և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանների պալատի ռազմավարական ծրագիրը (ծրագրերը).

22) կազմում է և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանների պալատի տարեկան բյուջեն.

23) յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին Փաստաբանների պալատի խորհրդին է ներկայացնում իր տարեկան ֆինանսական և ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունները:

24) Փաստաբանների պալատի խորհրդին առաջարկություն է ներկայացնում ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ մասնակցելու դրանցում, ինչպես նաև ստեղծելու առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումներ և հիմնարկներ:

25) առաջարկություն է ներկայացնում ստեղծել, վերակազմակերպել և լուծարել կենտրոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ.

26) ղեկավարում է Փաստաբանների պալատի կրթական, գիտական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը.

27) իրականացնում է օրենքով կամ Փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված, ինչպես նաև Փաստաբանների պալատի

մարմինների իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:

17.6. Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները դադարում են.

1) նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում՝ հաջորդ նախագահի լիազորությունները ստանձնելու պահից.

2) հրաժարական ներկայացնելու դեպքում.

3) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման կամ կասեցման դեպքում:

17.7. Փաստաբանների պալատի նախագահին հետ կանչելու գործընթաց կարող է նախաձեռնել Փաստաբանների պալատի խորհրդի, ինչպես նաև Փաստաբանների պալատի անդամների ընդհանուր թվի մեկ քառորդի պահանջով, հետևյալ դեպքերում՝

ա. Փաստաբանների պալատի նախագահը 15 (տասնհինգ) օր անընդմեջ անհարգելի պատճառով չի ներկայացել աշխատանքի և չի նշանակել փոխարինող.

բ. Փաստաբանների պալատի նախագահի երկարատև անաշխատունակությունը (ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 (հարյուր քսան) օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 (հարյուր քառասուն) օր).

գ. մեկ տարվա ընթացքում առնվազն երկրորդ անգամ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը Փաստաբանների պալատի խորհրդի կամ դատարանի կողմից վերացնելուց հետո Փաստաբանների պալատի նախագահը հրաժարվում է կարգապահական վարույթ հարուցել.

դ. Փաստաբանների պալատի մարմինների՝ ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն այլ անդամի ներգրավման համար կանոնադրությամբ սահմանված գործողությունները Փաստաբանների պալատի նախագահի կողմից մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ դիտավորյալ կերպով չկատարելու դեպքում:

17.8. Փաստաբանների կողմից Փաստաբանների պալատի նախագահին հետ կանչելու ստորագրահավաքը սկսվում է ընդհանուր ժողովի՝ Փաստաբանների պալատի նախագահին հետ կանչելու մասին որոշման նախագիծը առնվազն հիսուն փաստաբանի (նախաձեռնող խմբի) ստորագրությամբ հրապարակելու պահից: Հրապարակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում հայտարարություն տեղադրելու միջոցով: Փաստաբանը կարող է միանալ ստորագրահավաքին սույն մասում նշված կայքերում հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում՝ նախաձեռնող խմբին փոխանցելով ստորագրահավաքին միանալու մասին ստորագրված հայտարարության բնօրինակը: Փաստաբանների պալատի խորհուրդը սույն մասում նշված ստորագրությունները ստանալու

դեպքում որոշում է կայացնում արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին՝ ստորագրահավաքին միանալու ժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան քառասունհինգ օրվա ընթացքում, եթե ստորագրահավաքն անցկացվել է սույն հոդվածում նշված ժամկետում և կարգով:

17.9. Ընդհանուր ժողովի կողմից Փաստաբանների պալատի նախագահին հետ կանչելու մասին որոշում ընդունվելու պահից, Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները համարվում են դադարեցված:

17.10. Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում վերջինիս պարտականությունները կատարում է նրա տեղակալներից մեկը՝ մինչև Փաստաբանների պալատի նախագահի նոր ընտրությունը: Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում նոր ընտրությունն անցկացվում է 60 (վաթսուն) օրվա ընթացքում՝ ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման ընդհանուր կարգով:

17.11. Փաստաբանների պալատի նախագահը չի կարող իր կարգավիճակն օգտագործել.

1) քաղաքական բնույթի հայտարարություններ կատարելու համար և իր լիազորություններն իրականացնելիս պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն և չեզոքություն.

2) փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում առավելություն ստանալու համար:

17.12. Փաստաբանների պալատի նախագահն իր լիազորություններն իրականացնելու համար խորհրդի համաձայնությամբ կարող է նշանակել առավելագույնը երկու տեղակալներ՝ փաստաբանների կազմից: Փաստաբանների պալատի նախագահի տեղակալը փոխարինում է Փաստաբանների պալատի նախագահին նրա բացակայության ժամանակ:

17.13. Փաստաբանների պալատի նախագահն իր լիազորությունների իրականացման համար վարձատրվում է յուրաքանչյուր ամիս՝ ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամի համար օրենքով սահմանված աշխատավարձի չափով:

17.14. Փաստաբանների պալատի նախագահի աշխատանքի համատեղումը փաստաբանական գործունեության հետ չպետք է խոչընդոտի Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունների իրականացմանը:

17.15. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Փաստաբանների պալատի նախագահը կարող է խրախուսել աշխատողներին: Աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

5) կարգապահական տույժի հանում.

6) պատվոգրով պարգևատրում:

17.16. Փաստաբանների պալատի նախագահն երկարամյա աշխատանքի, մասնագիտական բացառիկ կարողությունների, փաստաբանական ինստիտուտում մեծ վաստակի կամ ներդրված ավանդի համար Փաստաբանների պալատի անդամին կարող է խրախուսել հետևյալ ձևերով՝

1) շնորհակալություն հայտարարելով.

2) պատվոգրով պարգևատրելով.

3) դրամական պարգևատրում տրամադրելով, բայց ոչ ավելի քան նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը.

4) արժեքավոր նվերով պարգևատրելով, որի արժեքը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը.

5) Փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված մեդալով կամ շքանշանով:

XVIII. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

18.1. Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով:

18.2. Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ՝

1) Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընտրված արտոնագիրը չկասեցված հինգ փաստաբան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ Օրենքով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

18.3. Որակավորման հանձնաժողովի Փաստաբանների պալատը ներկայացնող անդամներին ընտրում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ խորհրդի կողմից սահմանված կարգին համապատասխան:

18.4. Որակավորման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամի թեկնածու կարող է առաջադրվել իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունում վերջին վեց տարիների ընթացքում առնվազն երեք տարի իրավունք դասավանդած կամ գիտական

հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը: Թեկնածուներին ներգրավելու նպատակով Փաստաբանների պալատի խորհուրդը Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի ընտրություններից առնվազն 50 օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են խորհրդի սահմանած ժամկետում առաջադրել Որակավորման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամի թեկնածուի մեկական հավակնորդ: Հավակնորդների կողմից Փաստաբանների պալատի խորհրդին ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման և ուսումնասիրման կարգն ու պայմանները սահմանում է Փաստաբանների պալատի խորհուրդը: Սահմանված փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո, պահանջներին համապատասխանող անձանց Փաստաբանների պալատի խորհուրդը ներառում է Որակավորման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամի թեկնածուների շարքում:

18.5. Որակավորման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամին ընտրում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ Որակավորման հանձնաժողովի իրավաբան գիտնական թեկնածուների շարքից: Նախքան խորհրդի նիստի գումարումը, որի ընթացքում ընտրվելու են որակավորման հանձնաժողովի անդամները, թեկնածուների վերաբերյալ տեղեկությունները ուղարկվում են Փաստաբանների պալատի խորհրդի անդամներին:

XIX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

19.1. Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմինն է:

19.2. Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կազմավորվում է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցերը քննարկելու և լուծելու նպատակով չորս տարի ժամկետով՝ Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված ինը փաստաբաններից:

19.3. Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը.

1) քննարկում և լուծում է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցերը.

2) քննարկում և լուծում է հանձնաժողովի անդամին հայտնած բացարկի կամ ինքնաբացարկի հարցը.

3) հետաձգում է գործի քննությունը և պահանջում է լրացուցիչ ապացույցներ կողմերից կամ այլ անձանցից.

4) հրավիրում է փաստաբանին, որի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթը, դիմող կողմին, վկաներին և կարգապահական գործին մասնակցող այլ անձանց և լսում նրանց.

5) վերանայում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

6) իրականացնում է Օրենքով և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

19.4. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցերը քննարկելու և լուծելու նպատակով Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նիստի գումարման հետ կապված հարաբերությունները սահմանվում են Օրենքով:

XX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԸ

20.1. Փաստաբան է այն անձը, որը՝

1) Հայաստանի Հանրապետությունում ստացել է իրավագիտության բակալավրի կամ մագիստրոսի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով և

2) ստացել է արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

20.2. Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու և Փաստաբանների պալատի անդամ դառնալու իրավունք ունի սույն կանոնադրության 20.1-րդ կետի 1-ին ենթակետի պահանջին բավարարող գործունակ քաղաքացին (հավակնորդը), որը սահմանված կարգով հանձնել է որակավորման քննությունները և Որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է վկայագիր, բացառությամբ երբ առկա է Օրենքի 33-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության սահմանափակումներից որևէ մեկը:

20.3. Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը Փաստաբանների պալատ է ներկայացնում դիմում՝ Փաստաբանների պալատին անդամագրվելու խնդրանքով, որին կցվում է Որակավորման հանձնաժողովի տված վկայագրի պատճենը: Սույն կետում նշված դիմումը պետք է բովանդակի՝

1) անունը, հայրանունը և ազգանունը.

2) իր հետ կապ հաստատելու հնարավոր միջոցները՝ հեռախոսահամարը (հեռախոսահամարները) և էլեկտրոնային հասցեն.

3) փաստաբանական գործունեությունը, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում՝ իր մասնակցությամբ գործող առևտրային կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, մասնակցության չափը կամ անհատ ձեռնարկատիրոջ վկայականի տվյալները.

4) այլ փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպությունում աշխատելու դեպքում՝ գործատուի անունը (անվանումը) և գտնվելու վայրը.

5) դիմողի ստորագրությունը:

20.4. Որակավորման հանձնաժողովի կողմից տրված վկայագիրն ուժի մեջ է տրման պահից մինչև հաջորդ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար որակավորման քննությունների անցկացումը:

20.5. Փաստաբանների պալատի խորհուրդը հավակնորդի դիմումը քննարկում է մեկամսյա ժամկետում և քննարկումների արդյունքներով կայացնում է հավակնորդի դիմումը բավարարելու՝ Փաստաբանների պալատին անդամ դառնալու և փաստաբանի արտոնագիր տալու կամ հավակնորդի դիմումը մերժելու մասին որոշումներից մեկը:

20.6. Փաստաբանների պալատի խորհուրդը հավակնորդի դիմումը կարող է մերժել, եթե չեն ապահովվել Օրենքի 33-րդ և 45.11-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

20.7. Դիմումի մերժումը մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել դատական կարգով:

20.8. Փաստաբանների պալատին անդամագրված անձը հնգօրյա ժամկետում ստանում է Փաստաբանների պալատի կնիքով և Փաստաբանների պալատի խորհրդի նախագահի ստորագրությամբ վավերացված արտոնագիր:

20.9. Արտոնագիրը տրվում է անժամկետ՝ առանց տարիքային սահմանափակման:

20.10. Առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը Փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում տալիս է Օրենքով սահմանված երդումը:

20.11. Երդումը տրվում է անհատական կարգով՝ յուրաքանչյուր փաստաբանի կողմից երդման տեքստն ընթերցելու միջոցով: Փաստաբանը ստորագրում է երդման տեքստը:

20.12. Այլ պետության փաստաբանը, որը հավատարմագրվել է Փաստաբանների պալատի խորհրդի կողմից չի հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ:

20.13. Փաստաբանի օգնականը չի հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ:

20.14. Փաստաբանների պալատի անդամը փաստաբանների ցուցակում ընդգրկվելու նպատակով դիմում է ներկայացնում Փաստաբանների պալատի նախագահին:

20.15. Փաստաբանների պալատի անդամը փաստաբանների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումում պետք է նշի՝

1) անունը, հայրանունը և ազգանունը,

2) արտոնագրի համարը,

3) հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն,

4) իր մասնագիտացումը:

20.16. Փաստաբանների պալատի նախագահը տասնչորս օրվա ընթացքում ընդգրկում է Փաստաբանների պալատի անդամին փաստաբանների ցուցակում:

20.17. Փաստաբանների պալատի նախագահը առնվազն տարին մեկ անգամ (բայց ոչ ուշ, քան մարտի տասնհինգը) www.azdarar.am կայքում հրապարակում է փաստաբանների ցուցակը:

20.18. Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանին հանում է փաստաբանների ցուցակից Օրենքով նախատեսված դեպքերում:

Փաստաբանների պալատի անդամի իրավունքները և պարտականությունները

20.19. Պալատի անդամն իրավունք ունի՝

1) մասնակցել Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովներին՝ ձայնի իրավունքով.

2) ներկա գտնվել Փաստաբանների պալատի մարմինների բաց նիստերին, ծանոթանալ Փաստաբանների պալատի մարմինների նիստերի արձանագրություններին կամ դրանց քաղվածքներին (բացառությամբ կարգապահական գաղտնիք կամ այլ անձնական տվյալներ պարունակող արձանագրությունների).

3) իր իրավունքի խախտումը վերացնելու նպատակով Փաստաբանների պալատի մարմինների որոշումները բողոքարկել վերադաս մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ դատարան.

4) ընտրվել Փաստաբանների պալատի մարմինների ընտրովի պաշտոններում, եթե տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար բավարարում է Օրենքով սահմանված պահանջները.

5) օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

20.20. Փաստաբանը ցանկացած պահին կարող է դադարեցնել իր անդամությունը՝ դիմում ներկայացնելով Փաստաբանների պալատի նախագահին:

20.21. Փաստաբանների պալատի անդամը պարտավոր է՝

1) պահպանել Օրենքի, սույն կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները.

2) կատարել Փաստաբանների պալատի նախագահի և Փաստաբանների պալատի մարմինների՝ նրանց իրավասության սահմաններում ընդունած իրավական ակտերի պահանջները.

3) Փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամկետներում անցնել վերապատրաստում: Փաստաբանը վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից ազատվում է Խորհրդի

կողմից հաստատված կարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում.

ա. Փաստաբանների պալատի խորհրդի անդամ փաստաբանների կողմից (ինչպես նաև խորհրդի նախագահի) խորհրդի նիստերին մասնակցության դեպքում.

բ. Հաշվիչ հանձնաժողովի փաստաբան անդամների կողմից հանձնաժողովի նիստերին և աշխատանքներին մասնակցության դեպքում.

գ. Որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների կողմից որակավորման քննություններին մասնակցելու դեպքում.

դ. Փաստաբանների պալատի կողմից ձևավորված հանձնաժողովների քննարկումներին մասնակցելու դեպքում.

ե. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտորը՝ պաշտոնավարման ընթացքում, ինչպես նաև կառավարման խորհրդի փաստաբան անդամները՝ կառավարման խորհրդի անդամի պաշտոնավարման ընթացքում.

զ. Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամները՝ նշված խորհրդի նիստերին մասնակցելու դեպքում.

է. պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունում, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայում և ՀՀ արդարադատության ակադեմիայում դասավանդող փաստաբանները՝ իրավունքի բնագավառում դասախոսություն անցկացնելու դեպքում.

ը. Փաստաբանների պալատի կամ ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից անվճար իրավաբանական օգնություն (pro bono) ծրագրի շրջանակում քաղաքացուն տրամադրած անվճար խորհրդատվության դեպքում.

թ. ՀՀ փաստաբանական ակադեմիայում դասավանդելու կամ Փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթաց անցկացնելու դեպքում.

ժ. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդրի պրակտիկան լրիվ ծավալով ղեկավարելու դեպքում

ժա. փաստաբանական գործունեություն չիրականացնող առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամության դեպքում.

ժբ. հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև երեխայի երեք տարեկանը լրանալու դեպքում.

ժգ. կին փաստաբանները՝ առնվազն երեք անչափահաս երեխա ունենալու դեպքում՝ մինչև երեխաներից մեկի չափահաս դառնալը.

ժդ. այլ պետությունում ուսուցում անցնող փաստաբանը.

ժե. ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով զորահավաքի և ռազմական գործողությունների մասնակցելու դեպքում.

ժզ. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտելու և փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստանալու դեպքում՝ փաստաբանական ակադեմիան ավարտելուն հաջորդող 2 կիսամյակների ընթացքում.

ժէ. մասնագիտական գիտական աշխատության կամ ձեռնարկի կամ դասագրքի հրատարակման, ինչպես նաև գիտաժողովի մասնակցության դեպքում.

ժը. 63 (վաթսուներեք) տարին լրացած փաստաբանները՝ փաստաբանական գործունեություն չիրականացնելու դեպքում.

ժթ. փաստաբանների առանձին խմբերի համար՝ կապված փաստաբանի տարիքի, կարգավիճակի կամ այլ հատկանիշի հետ՝ Խորհրդի առանձին որոշմամբ վերապատրաստմանը մասնակցելու արտոնություններ սահմանելու դեպքում.

4) Փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված ժամկետներում և հաստատված չափով մուծել մուտքավճար, լրացուցիչ վերապատրաստման համար վճար, ինչպես նաև անդամավճար: Փաստաբանը անդամավճար մուծելու պարտավորությունից ազատվում է Խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում.

ա. առաջին կարգի հաշմանդամություն ունենալու դեպքում.

բ. ծանր հիվանդություն դեպքում՝ հիվանդության տևողության ժամանակահատվածով.

գ. պատերազմում զինվորական ծառայության կամ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված (մահացած), անհետ կորած կամ գերեվարված զինծառայող (կամավոր) ծնող, ամուսին կամ զավակ ունենալու դեպքում՝ Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով.

դ. ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով զորահավաքի և ռազմական գործողություններին մասնակցելու դեպքում՝ ռազմական գործողությունների ժամանակահատվածով.

ե. ռազմական դրության պայմաններում անմիջականորեն ռազմական գործողությունների իրականացման վայրում մշտապես բնակվելու (հաշվառված լինելու) դեպքում՝ Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով.

զ. 70 (յոթանասուն) տարին լրացած լինելու դեպքում.

է. հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև երեխայի մեկ տարեկանը լրանալու դեպքում.

ը. փաստաբանների առանձին խմբերի համար՝ կապված փաստաբանի տարիքի, կարգավիճակի կամ այլ հատկանիշի հետ՝ Խորհրդի առանձին որոշմամբ անդամավճարի արտոնություններ սահմանելու դեպքում:

5) կատարել սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործողություններ:

20.22. Փաստաբանների պալատի հետ փոխհարաբերություններում (այդ թվում կարգապահական վարույթի շրջանակներում) փաստաբանը համարվում է իր հետ կապված գործընթացի վերաբերյալ պատշաճ ծանուցված կամ համապատասխան փաստաթուղթը ստացած, եթե ծանուցումը կամ

փաստաթուղթը հասցեատեր փաստաբանին.

1) հանձնվել է առձեռն.

2) ուղարկվել է պատվիրված նամակով՝ Փաստաբանների պալատին տրամադրված հասցեով և հանձնման մասին ծանուցմամբ.

3) ուղարկվել է Փաստաբանների պալատին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով:

20.23. Եթե ծանուցումը կամ փաստաթուղթը պատվիրված նամակով ուղարկելուց կամ էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելուց հետո երկշաբաթյա ժամկետում պալատը չի ստացել հետադարձ ծանուցում կամ դեռևս առկա չէ էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստում կամ արձագանք, ապա ծանուցումը կամ փաստաթուղթը հրապարակվում է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում: Ծանուցումը կամ փաստաթուղթը Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո՝ 10-րդ օրը, փաստաբանը համարվում է պատշաճ ծանուցված կամ փաստաթուղթը ստացած:

XXI. ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

21.1. Այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար կարող է հավատարմագրվել մեկ տարի ժամկետով կամ կոնկրետ գործով՝ սույն կանոնադրությամբ և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան: Հավատարմագիրը տրվում է փաստաբանի լիարժեք իրավունքներով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ ծառայողական գաղտնիքին առնչվող հարցերով իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունքի) կամ Փաստաբանների պալատի անդամ փաստաբանի (սույն գլխում այսուհետ՝ օժանդակող փաստաբան) հետ համատեղ մասնակցության պայմանով փաստաբանի իրավունքներով:

21.2. Առաջին անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի խորհուրդը՝ դիմումը ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում: Երկրորդ կամ հերթական անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի նախագահը՝ դիմումն ստանալու պահից տասնհինգ օրվա ընթացքում:

21.3. Օժանդակող փաստաբանի հետ մասնակցության իրավունքով հավատարմագիրը տրվում է խորհրդի կողմից սահմանված պարզեցված կարգով (առանց ՀՀ օրենսդրության մասին հարցազրույցի կամ ստուգման)՝ այլ պետության փաստաբանի դիմումի հիման վրա՝ օժանդակող փաստաբանի գրավոր համաձայնության և Պալատի խորհրդի սահմանած այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

21.4. Փաստաբանի լիարժեք իրավունքներով հավատարմագիրը տրամադրելու համար Պալատի խորհուրդը իր կողմից սահմանած կարգով (հարցազրույցի, թեստի կամ այլ եղանակով) պարզում է այլ պետության փաստաբանի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը տիրապետելու հարցը: Հայոց լեզվին չտիրապետող այլ պետության փաստաբանը Պալատի խորհրդի նիստին մասնակցում է իր կողմից և իր հաշվին հրավիրած թարգմանչի հետ միասին:

21.5. Հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու կարգը սահմանում է Փաստաբանների պալատի խորհուրդը:

XXII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

22.1. Փաստաբանների պալատն իրավունք ունի օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, ակումբներ, հանձնաժողովներ և այլ մարմիններ: Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

22.2. Փաստաբանների պալատի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի Փաստաբանների պալատի անվանումը:

22.3. Փաստաբանների պալատի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Փաստաբանների պալատի նախագահի կողմից ու գործում են նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա:

22.4. Հանրային պաշտպանի գրասենյակը հանդիսանում է Փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանումը:

22.5. Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը ընդունում է, ինչպես նաև դրանում լրացումներ և փոփոխություններ է կատարում Փաստաբանների պալատի խորհուրդը:

22.6. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին նշանակում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ առնվազն հինգ տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից, չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի քան երկու անգամ անընդմեջ:

22.7. Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջադրել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի

թեկնածու՝ վերջինիս համաձայնությամբ:

22.8. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով, ինչպես նաև իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

22.9. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը.

1) ներկայացնում է հանրային պաշտպանի գրասենյակը.

2) կազմակերպում է Օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և արդյունավետ իրավաբանական օգնության իրականացումը.

3) կատարում է աշխատանքի բաժանում հանրային պաշտպանների միջև.

4) ընդունում է որոշումներ հանրային պաշտպանի գրասենյակի բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ.

5) Օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված դեպքերում քաղաքացու դիմումի հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու և գործը հանրային պաշտպանին կամ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանին հանձնելու մասին կամ հանրային պաշտպանություն իրականացնելու դիմումը մերժելու մասին, երբ առկա չեն Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերը կամ անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կհակասի Օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հիմքերին: Հանրային պաշտպանության իրականացումը մերժելու մասին հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումը պետք է լինի պատճառաբանված.

6) քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումի կամ որոշման հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու և գործը հանրային պաշտպանին կամ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանին հանձնելու մասին: Սույն կետով նախատեսված դեպքում հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տվյալների կամ հիմքերի վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարող է դիմումը կամ որոշումը վերադարձնել քրեական վարույթն իրականացնող մարմնին և պահանջել ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ միաժամանակ ապահովելով անձի հանրային պաշտպանությունը: Նման պահանջի դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է եռօրյա ժամկետում անհատույց տրամադրել պահանջվող տեղեկատվությունը.

7) հսկողություն է իրականացնում հանրային պաշտպանների և Օրենքի 41-րդ հոդվածի 8-րդ մասում նշված անձանց կողմից իրավաբանական օգնություն իրականացնելու գործընթացի նկատմամբ.

8) միջնորդություն է ներկայացնում հանրային պաշտպանի, Օրենքի 41-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված անձանց նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու կամ խրախուսելու համար.

9) կարող է դիմել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ տնտեսավարող սուբյեկտներին՝ անվճարունակ անձանց անվճարունակության փաստը ստուգելու, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով: Նշված մարմիններն ու տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են հնգօրյա ժամկետում անհատույց տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ պահանջվող փաստաթղթերը օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում.

10) Օրենքով նախատեսված դեպքերում աջակցում է պալատի մարմինների լիազորությունների իրականացմանը.

11) Փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգին համապատասխան ապահովում է՝

ա. հանրային պաշտպանի գրասենյակին հասցեագրված դիմումների հաշվառումը և քննարկումը,

բ. իրավաբանական օգնություն տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումների հաշվառումը,

գ. հանրային պաշտպանների և Օրենքի 41-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում նշված անձանց կողմից փաստաբանական գործերը ճիշտ կազմելու նկատմամբ հսկողությունը,

դ. ավարտված վարույթների ժամանակին արխիվացումը,

ե. Օրենքով նախատեսված դեպքերում հաշվետվությունների կամ վիճակագրության ներկայացումը՝ Փաստաբանների պալատի խորհրդին:

22.10. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները դադարում են.

1) նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում՝ հաջորդ ղեկավարի լիազորությունները ստանձնելու պահից.

2) հրաժարական ներկայացնելու դեպքում.

3) նրա արտոնագրի գործողության դադարեցման կամ կասեցման դեպքում:

22.11. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, եթե նա.

1) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու ամիս աշխատանքի չի ներկայացել.

2) պատշաճ չի կատարում օրենքով կամ Փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունները և Փաստաբանների պալատի նախագահի գրավոր նախազգուշացումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում չի վերացրել թերությունները կամ խախտումները.

3) Օրենքի 41-րդ հոդվածի պահանջների խախտմամբ հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշում է կայացրել, երբ ակնհայտ է, որ անձը Օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան չի հանդիսանում հանրային

պաշտպանության շահառու և հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը իմացել է հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացնելու հիմքերի բացակայության մասին.

4) Օրենքի 41-րդ հոդվածի պահանջների խախտմամբ պարբերաբար հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշումներ է կայացրել.

5) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

22.12. Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ սույն հոդվածով սահմանված դեպքերում կարող է հանդես գալ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու առաջարկությամբ: Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

XXIII. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

23.1. Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Փաստաբանների պալատը պետք է ներգրավի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Փաստաբանների պալատի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ որը չի կարող իրականացվել անընդմեջ նույն անձի (աուդիտորի) կամ նույն կազմակերպության կողմից: Աուդիտորական կազմակերպությանն ընտրելու համար Փաստաբանների պալատի ֆինանսական տնօրենը ներկայացնում է առնվազն երեք աուդիտորական կազմակերպության գնային առաջարկ: Արտաքին աուդիտ իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Փաստաբանների պալատի խորհուրդը: Խորհուրդը կաշկանդված չէ աուդիտորական ծառայության գնի մատչելիության պայմանով:

23.2. Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև արտահերթ աուդիտորական ստուգում: Խորհրդի առնվազն 6 (վեց) անդամի (սույն կետի իմաստով՝ այսուհետ՝ նախաձեռնող խումբ) պահանջով Խորհրդի նախագահը պարտավոր է խորհրդի օրակարգում ներառել արտահերթ աուդիտորական ստուգում կատարելու հարց: Սույն կետում նշված դեպքում, արտահերթ աուդիտորական ստուգում կատարելու հարցի հետ զուգահեռ քննարկվում է նաև աուդիտորական կազմակերպություն ընտրելու, ինչպես նաև Փաստաբանների պալատի բյուջեում աուդիտի ֆինանսավորման հարցով

փոփոխություն կատարելու մասին հարցերը: Նախաձեռնող խումբը խորհրդին է ներկայացնում առնվազն երեք աուդիտորական կազմակերպությունների գնային առաջարկները: Սույն կետում նշված հարցը խորհրդի կողմից մերժվելու դեպքում, նույն հարցը կարող է ներկայացվել քննարկման առնվազն վեց ամիս հետո:

23.3. Փաստաբանների պալատը արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության ստուգումը:

23.4. Արտաքին աուդիտի եզրակացությունը մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական կայքում:

XXIV. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՒՅՔԸ, ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

24.1. Փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է փաստաբանների անդամավճարներից, որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ հավակնորդների վճարումներից, փաստաբանների հավակնորդների մուտքի վճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից: Փաստաբանների պալատի անդամավճարները մուծվում են Փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով՝ Փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

24.2. Փաստաբանների պալատն իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

24.3. Փաստաբանների պալատը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքն՝ իր կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան:

24.4. Փաստաբանների պալատի նախագահն ազատ է ինքնուրույն տնօրինել Փաստաբանների պալատի՝ մեկ գործարքի մասով նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող ֆինանսական միջոցները, Փաստաբանների պալատի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ձեռք բերել գույք, վճարել ծառայությունների և/կամ աշխատանքների դիմաց՝ հաշվի առնելով Խորհրդի կողմից հաստատած բյուջեն:

24.5. Օրենքով և սույն կանոնադրությամբ իր խնդիրներն իրագործելու համար Փաստաբանների պալատը մասնավորապես կատարում է՝

1) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան

հավասարեցված այլ վճարումների (այդ թվում՝ հարկերի և պարտադիր վճարների) ծախսեր,

2) վերապատրաստման դասախոսների կողմից ծառայությունների մատուցման վճարմանն ուղղված ծախսեր,

3) կոմունալ վճարումների գծով ծախսեր,

4) փոստային և հեռահաղորդակցման ծառայությունների ծախսեր,

5) գրասենյակային և տեղեկատվական բնույթի ծախսեր,

6) տրանսպորտային և ներկայացուցչական ծախսեր,

7) այլ ծառայությունների (աշխատանքների) գծով ծախսեր,

8) ապրանքանյութական պաշարների գծով ծախսեր,

9) վերանորոգման աշխատանքների գծով ծախսեր,

10) միջազգային համագործակցության գծով ծախսեր,

11) ներքին ծրագրերի իրագործման գծով ծախսեր:

24.6. Փաստաբանների պալատի բյուջեի ուղղություններով չնախատեսված խոշոր գործարք կնքելու (կատարելու), այն է՝ Փաստաբանների պալատի գույքը վաճառելու կամ ձեռք բերելու կամ այլ գործարք կնքելու (կատարելու) դեպքում, եթե գույքի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (**այսուհետ՝ Խոշոր գործարք**), մինչև գործարքի կատարումը Փաստաբանների պալատի նախագահը պետք է նախապես ստանա Փաստաբանների պալատի խորհրդի համաձայնությունը (որոշումը), բացառությամբ ստացվող նվիրատվության (նվիրաբերության) և դրամաշնորհի գործարքների (որոնք կարող են կնքվել առանց Խորհրդի համաձայնության): Ընդ որում, եթե Խորհուրդը քննարկում է նոր գույք ձեռք բերելու համաձայնություն տալու հարց, ապա Խորհրդին Փաստաբանների պալատի նախագահը կամ ֆինանսական տնօրենը ներկայացնում է համապատասխան ապրանքի գնի և/կամ տեխնիկական նկարագրի վերաբերյալ առնվազն 2 (երկու) անձից (մատակարարից) ստացված գնային առաջարկներ, բացառությամբ երբ՝ (1) առաջարկվել է կոնկրետ հատկանիշներով (գտնվելու վայր, մակնիշ և այլ) կամ (2) երկրորդական շուկայից գույք ձեռք բերելու հայտ կամ (3) գնման ենթակա գույքի հետ կապված հնարավոր չէ այլ ողջամիտ առաջարկ ստանալ կամ (4) ներկայացվել է մեծ միջոցառում իրականացնելու հայտ, որի ընդհանուր բյուջեն գերազանցելու է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: Գույք ձեռք բերելու վերաբերյալ Խորհրդի համաձայնության դեպքում, Փաստաբանների պալատի նախագահն իրավունք ունի առավել մատչելի տարբերակով գույք ձեռք բերել առանց Խորհրդի լրացուցիչ որոշման: Եթե ներկայացվել է Փաստաբանների պալատի՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող հաշվեկշռային արժեքից բարձր գնով գույք վաճառելու հարց, ապա ֆինանսական տնօրենը Խորհրդին պետք է ներկայացնի գույքի գնահատման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ: Ֆինանսական տնօրենը կարող է նաև Խորհրդին ներկայացնել գնորդի մասին տեղեկություններ, եթե հավանական գնորդը հայտնի է: Սույն կետում նշված

կարգը վերաբերում է նաև նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող ծառայություններին և աշխատանքներին:

24.7. Փաստաբանների պալատի խորհրդի անդամն իրավունք ունի Փաստաբանների պալատի գտնվելու վայրում (այսուհետ՝ Գրասենյակում) ծանոթանալ առաջարկների հիմքերին, եթե այն նախապես չի տեղադրվել Փաստաբանների պալատի խորհրդի անդամների համար նախատեսված էլեկտրոնային պահոցում (այսուհետ՝ Էլեկտրոնային պահոց):

24.8. Խորհուրդը հերթական նիստի ժամանակ քննարկում է ֆինանսական տնօրենի առաջարկները, ինչպես նաև անվստահություն հայտնած խորհրդի անդամի կողմից ներկայացված առաջարկը (ներկայացված լինելու դեպքում):

24.9. Փաստաբանների պալատի բյուջեի ուղղություններով չնախատեսված խոշոր գործարք կնքելու դեպքում, Փաստաբանների պալատի բյուջեն համապատասխան մասով համարվելու է փոփոխված, բացառությամբ այն դեպքի, երբ խորհուրդը որոշել է գործարքը կատարել պահուստային ֆոնդի միջոցով:

24.10. Փաստաբանների պալատի նախագահը Փաստաբանների պալատի ֆինանսական միջոցները կարող է օգտագործել միայն Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատված բյուջեին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում Փաստաբանների պալատի նախագահը կարող է դիմել Փաստաբանների պալատի խորհրդին՝ բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու համար:

24.11. Փաստաբանների պալատի նախագահը հերթական տարվա համար կազմում է փաստաբանների պալատի բյուջեն (առանց հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող գումարների և ծախսերի)՝ հաշվետու տարվան նախորդող տարվա վերջին եռամսյակում:

24.12. Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հերթական տարվա բյուջեն չհաստատվելու դեպքում՝ փաստաբանների պալատը գործում է հաշվետու տարվան նախորդող տարվա բյուջեով, մինչև նոր բյուջեի հաստատումը:

24.13. Փաստաբանների պալատի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) փաստաբաններից, օգնականներից և օտարերկրացի հավատարմագրված փաստաբաններից ստացված վճարները.

2) դրամական մուտքերը պետական բյուջեից.

3) Փաստաբանների պալատի և Փաստաբանների պալատի կողմից ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

4) դրամաշնորհներից ստացած միջոցները.

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների

նվիրատվությունները և նվիրաբերությունները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից.

7) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման համար ստացված գումարներից.

8) Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման համար կատարվող վճարներից.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

24.14. Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել էր նախապես:

XXV. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

25.1. Փաստաբանների պալատի վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

* * * * *